



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԻՑ



Internews



**ՀԱՖՈՐՄԱՑԻԱՅԻ
ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ**

ԼՐԱԳԻՐՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. 2024



ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ. 2024 Հետազոտություն

Հետազոտության հիմնական նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել Հայաստանում լրագրողների տեղեկություն ստանալու իրավունքի իրացման պրակտիկան՝ բացահայտելով առկա հիմնախնդիրները, խոչընդոտները և առաջարկելով գործնական լուծումներ՝ ուղղված դրանց հաղթահարմանը:

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի առատաձեռն աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Ինտերնյուս Նեթվորքի ենթադրամաշնորհառու Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ն, և այն պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ-ի կամ Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

© ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԵՐԵՎԱՆ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓԱԳԻՐ.....3

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ
ՄԵԹՈՂՈՒՄՆԵՐԸ.....5

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....7

ԲԱԺԻՆ 1. ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ
.....9

1.1 ՀԱՐՑՈՒՄԸ ՀԻՄՆԱՎՈՐԵԼՈՒ ՊԱՀԱՆՁԸ.....9

1.2 ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄՆԵՐՆ
ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ.....12

1.3 ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ.....16

1.4 ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ18

1.5. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻՆ
ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ21

1.6 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԸ.....26

ԲԱԺԻՆ 2 ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԵՐԺՈՒՄՆԵՐԸ
.....29

2.1 ՄԵՐԺՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՔԵՐԸ.....29

2.2 ՄԵՐԺՈՒՄԸ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ32

ԲԱԺԻՆ 3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ
ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆԸ35

3.1 ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐԸ.....35

3.2 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆԸ38

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆՆԵՐ41

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանում տեղեկատվության ազատության մասին օրենսդրության ձևավորումից 21 տարի անց դեռևս բազմաթիվ խնդիրներ կան: Թեև տեղեկատվության ազատության ոլորտում ձևավորվել է դրական պրակտիկա, այնուամենայնիվ առկա խնդիրներն էական խոչընդոտ են լրագրողների իրավունքների և մեդիա առաքելության իրականացման համար: Թեև [«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով](#) (այսուհետ՝ նաև՝ ՏԱ մասին օրենք, Օրենք) նախատեսված են տեղեկություն տրամադրելու բավականին հստակ ընթացակարգեր, այնուամենայնիվ պետք է նշել, որ բացակայում են արդյունավետ կիրառման մեխանիզմները՝ խոչընդոտելով լրագրողների տեղեկատվության ազատության իրավունքի լիարժեք իրացմանը:

Լրագրողների՝ տեղեկություն ստանալու հարցումների պրակտիկայի ուսումնասիրությունը և լրագրողական համայնքում կատարված հարցումների արդյունքները վկայում են, որ լրագրողների հարցումները քննարկելիս և պատասխանելիս տեղեկություն տնօրինողները հաճախ թույլ են տալիս տեղեկատվության ազատության օրենսդրության և, ըստ այդմ, լրագրողների տեղեկություններ ստանալու իրավունքի բազմաբնույթ խախտումներ, որոնք համակարգված ներկայացված են այս հետազոտության տարբեր բաժիններում:

Արձանագրված խնդիրները դրսևորվում են տարբեր մակարդակներում՝ ինստիտուցիոնալ, օրենսդրական, քաղաքականության: Առաջնային խնդիրներից է հարցումները հիմնավորելու ապօրինի պահանջը: Հարցված լրագրողների 61%-ը նշել է, որ տարբեր պարբերականությամբ բախվում է այնպիսի իրավիճակների, երբ տեղեկություն տնօրինող պետական մարմինը պահանջում է հիմնավորել, թե ինչու է լրագրողը տվյալ հարցումը ներկայացրել և/կամ ինչպես է պատրաստվում օգտագործել տեղեկությունները: Նման պահանջ ներկայացնելը տեղեկատվության ազատության ազգային և միջազգային կանոնակարգերի ուղղակի խախտում է:

Տեղեկություն ստանալու գործընթացում լրջագույն խնդիրներից է հարցումներին տրված պաշտոնական պատասխանների որակը: Լրագրողների կեսից ավելին հարցումների պատասխանների բովանդակությունը գնահատել է անբավարար (54.9%): Որոշ դեպքերում լրագրողները ստանում են պատասխաններ, որոնք թերի են կամ շատ ընդհանրական կամ չեն պարունակում առաջադրված բոլոր հարցերի կոնկրետ պատասխանները: Իրավիճակն ավելի է բարդանում, երբ լրագրողների հարցումները շոշափում են զգայուն թեմաներ: Միևնույն ժամանակ հարցված լրագրողներից որևէ մեկը չի նշել, որ հարցումների պատասխանները լիովին բավարարում են իրեն:

Մեկից ավելի հարցերի առաջադրման դեպքում պատասխանն առանց հերթական համարակալման ներկայացնելու պրակտիկան վկայում է այն մասին, որ տեղեկություն տնօրինողները կամ դիտավորյալ անտեսում են հարցմանը պատասխանելու օրենսդրությամբ սահմանված կարգը, կամ տեղյակ չեն այդ կարգավորման մասին կամ երկուսը միասին:

Տեղեկություն ստանալու գործընթացում ուշադրության է արժանի խտրականության խնդիրը: Լրագրողական համայնքի ներկայացուցիչների 64,5%-ը մատնանշում է, որ տեղեկություն տրամադրելիս պետական մարմինները խտրականություն են դնում

տարբեր լրատվամիջոցների և լրագրողների միջև: Ընդ որում, հարցվածների միայն 2.6%-ը խտրականության դեպքերի չի առնչվել: Խնդիրը մեծամասամբ կախված է նրանից, թե որ լրատվամիջոցն է ներկայացնում լրագրողը: Եթե այն աչքի է ընկնում կառավարության սուր քննադատությամբ, այս լրատվամիջոցների լրագրողների հարցումներն առավել հաճախ են արժանանում ժամկետանց, անորոշ կամ անհիմն պատասխանների:

Տեղեկություն ստանալու իրավունքի խախտումների մյուս խումբն առնչվում է հարցումներին պատասխանելու օրենքով սահմանված ժամկետներին: Լրագրողների միայն 35%-ն է նշել օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում պատասխան ստանալու մասին: Ընդ որում, հարցված լրագրողների 37.7%-ը նշել է, որ պատասխանները ստանում է միջինում 6-10 օրվա ընթացքում օրենքով սահմանված 5-օրյա ժամկետի փոխարեն, իսկ 26%-ը նշել է, որ պատասխաններ ստանում է 11-30 օրվա ընթացքում, և 1%-ը նշել է օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում պատասխան ստանալու մասին:

Ժամկետների հետ կապված մյուս խնդիրը լրացուցիչ աշխատանք կատարելու հիմնավորմամբ պատասխանի ժամկետների հետաձգման հնարավորության չարաշահումն է: Պատասխանելով ԻԱԿ այն հարցին, թե ինչ պարբերականությամբ են պետական կառույցները լրացուցիչ ժամանակ խնդրում հարցումներին պատասխանելու համար՝ հարցված լրագրողների գրեթե կեսը՝ 48%-ը նշել է «հաճախ» տարբերակը: Ստացվում է, որ գրեթե ամեն երկրորդ հարցման պատասխանը տրվում է լրացուցիչ՝ 30-օրյա ժամկետում, որը լրագրողների մասնագիտական պարտականությունների կատարման տեսանկյունից լուրջ խոչընդոտ է:

Հարցմանը մասնակցած լրագրողների 72.7%-ը նշել է, որ ամենադժվարը ռազմական և անվտանգության ոլորտների վերաբերյալ տեղեկություններ ստանալն է: Մտահոգիչ է, որ հարցված լրագրողների շուրջ 11.5%-ը հայտնել է, որ առավել հաճախ տեղեկության տրամադրումը մերժում են առանց հիմնավորման:

Լրագրողները թեև ունեն խախտված իրավունքները դատական կարգով բողոքարկելու հնարավորություն, սակայն այն հաճախ անարդյունավետ է խիստ ծախսատար և ժամանակատար լինելու պատճառով: Տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի քննության համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն հատուկ՝ առավել սեղմ դատավարական ժամկետներ և ընթացակարգեր, ինչի հետևանքով այս գործերի տևական քննությունը հաճախ զրկում է լրագրողին արդյունավետ իրավական պաշտպանության միջոցից: Դատական պրակտիկայում նաև լիարժեք չեն կիրառվում տեղեկություն ստանալու իրավունքը խախտելու համար պատասխանատվություն սահմանող նորմերը:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը՝ խախտումները բողոքարկելու լավագույն մեխանիզմը բողոքարկումն է տեղեկատվության ազատության անկախ և անկողմնակալ մարմնին: Թեև ՏՄ լիազոր մարմնի մասին նշվում է թե՛ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, թե՛ [Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին Կոնվենցիայում](#), սակայն Հայաստանում այդ մարմինը դեռևս ձևավորված չէ: Ուստի, մերժումները բողոքարկելու միակ արդյունավետ մեխանիզմը դեռևս մնում է դատական կարգով բողոքարկումը:

Արձանագրված բազմաբնույթ խնդիրները վկայում են, որ տեղեկություն տնօրինող պետական մամիներում առկա է ՏԱ օրենսդրության կիրառմանն ուղղված միասնական չափանիշների և մեխանիզմների բացակայությունը: Չկա նաև ոլորտում ձևավորված միասնական վիճակագրություն: Միաժամանակ, արձանագրվել է, որ տեղեկություն տնօրինողների շրջանում առկա է գիտելիքի և հմտությունների պակաս՝ տեղեկատվության ազատության իրավունքի մասին ընդհանրապես և «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի և Կոնվենցիոն կարգավորումների մասին մասնավորապես:

Հետազոտությունը ներառում է նաև բացահայտված խնդիրների լուծմանն ուղղված գործնական առաջարկներ և խորհրդատվականներ, որոնք հասցեագրված են տարբեր դերակատարների՝ տեղեկություն փնտրողներին՝ քաղաքացիական հասարակությանը և լրագրողական համայնքին, տեղեկություն տնօրինողներին, ՀՀ կառավարությանը, օրենսդիր մարմին՝ ՀՀ ազգային ժողովին, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդին և դատարաններին՝ ակնկալելով բոլորի հասցեական արձագանքը և ներգրավումը արձանագրված խնդիրների լուծման գործընթացում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱՆ

Հետազոտության հիմնական նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել Հայաստանում՝ լրագրողների տեղեկություն ստանալու իրավունքի իրացման պրակտիկան՝ բացահայտելով առկա հիմնախնդիրները, խոչընդոտները և առաջարկելով գործնական լուծումներ՝ ուղղված դրանց հաղթահարմանը:

Հետազոտության խնդիրներն են.

- իրականացնել տեղեկատվության ազատության առկա իրավիճակի գնահատում՝ ներկայացնելով լրագրողների տեղեկություն ստանալու պրակտիկայի առանձնահատկությունները,
- բացահայտել լրագրողների մասնագիտական առանձնահատկություններով պայմանավորված հիմնախնդիրները և խոչընդոտները,
- ընդգծել «ՏԱ մասին» ՀՀ օրենքի բացերը, որոնք անմիջական ազդեցություն են ունենում լրագրողների տեղեկություն ստանալու իրավունքի իրացման գործընթացում,
- ներկայացնել լրագրողների տեղեկություն ստանալու իրավունքի լիարժեք ապահովմանն ուղղված առաջարկներ և խորհրդատվականներ՝ ուղղված տարբեր շահառուների և դերակատարների:

Հետազոտության մեթոդոլոգիան ներառում է հետազոտական տարբեր մեթոդների համադրում: Հետազոտության համար առաջնային տվյալները հավաքագրվել են նախապես մշակված հարցաշարին լրագրողական համայնքի ներկայացուցիչների տված պատասխանների հիման վրա: **Առցանց հարցաշարին պատասխանել է 77 լրագրող**, որոնք ներկայացնում են Երևանում և մարզերում գործող տարբեր լրատվամիջոցներ՝ հեռուստատեսություն, ռադիո, տպագիր մամուլ և առցանց լրատվամիջոցներ: Հարցաշարում ներառված հարցերը վերաբերում են տեղեկատվության ազատության պրակտիկայի ամենատարբեր ասպեկտների՝ տեղեկություն ստանալու հարցումների

կազմման փուլից մինչ տեղեկություն ստանալու խախտված իրավունքի վերականգնման մեխանիզմների կիրառում:

Հարցաշարի հիման վրա տվյալների հավաքագրմանը հաջորդել են ոլորտի փորձագետների, պետական կառավարման մարմինների տեղեկատվության ազատության պատասխանատուների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ խորացված հարցազրույցները՝ բացահայտելու խորքային հիմնախնդիրները և մշակելու դրանց լուծմանն ուղղված համալիր առաջարկներ: **Իրականացվել է 11 խորքային հարցազրույց 2024թ.-ի ապրիլի ընթացքում:** Այս հարցազրույցները բացահայտում են տարբեր դերակատարների պատկերացումները արձանագրված խնդիրների խորքային պատճառների և անհրաժեշտ համալիր փոփոխությունների հիմնական ուղղությունների մասին:

Հետազոտողների թիմը նաև տվյալներ է հավաքել հեղինակավոր աղբյուրներից, այդ թվում՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներից, Եվրոպայի խորհրդի փորձագետների իրականացրած ուսումնասիրություններից, հրապարակված պաշտոնական վիճակագրությունից, տեղեկատվության ազատության ոլորտում՝ մասնագիտացած կառույցի՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի (այսուհետ նաև՝ ԻԱԿ) վերջին տարիներին իրականացրած հետազոտություններից, ինչպես նաև միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությունից:

Հետազոտության մեթոդաբանությունը ներառում է նաև պրակտիկայի անմիջական դիտարկումները: Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ամենօրյա ռեժիմով խորհրդատվություն է տալիս գործող լրագրողներին տեղեկություն ստանալու իրավունքի իրացման մեխանիզմների վերաբերյալ: Այս պրակտիկ դեպքերն օգնել են հետազոտողներին արձանագրել լրագրողների համար ամենախոցելի խնդիրները:

Հետազոտական թիմը նաև իրականացրել է ոլորտի իրավական դաշտի ուսումնասիրություն՝ գույքագրելով առկա բացերը և դրանց պրակտիկ դրսևորումները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ ՏԱ օրենք) բարելավման կարիքին և անհրաժեշտությանը: Հետազոտության բոլոր ենթաբաժիններում ներկայացված են խնդրո առարկա հիմնախնդրի օրենսդրական կարգավորումները՝ ներառյալ ազգային օրենքների և միջազգային փաստաթղթերի դրույթները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվության ազատությունը մամուլի ազատության հիմքն է: Տեղեկություն ստանալու իրավունքը թույլ է տալիս լրագրողներին իրականացնել իրենց առաքելությունը՝ հանրությանն ապահովելով՝ օբյեկտիվ, ժամանակին և լիարժեք տեղեկությամբ: Տեղեկատվության մատչելիությունը լրագրողներին հնարավորություն է տալիս ստանալ տեղեկություններ՝ ուսումնասիրելու և վերլուծելու բարդ և զգայուն թեմաներ՝ հանրությանը տրամադրելով անհրաժեշտ տեղեկություններ հանրային բանավեճերում ներգրավվելու և որոշումների կայացմանը մասնակցելու համար: Տեղեկատվության ազատությունը նաև կառավարության հանդեպ վստահության ձևավորման նախապայման է:

Տեղեկություն ստանալու իրավունքը Հայաստանում ամրագրվել է ՀՀ Սահմանադրությամբ և առարկայացել 2003թ.-ին ընդունված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով, որով սահմանվում են Հայաստանում օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներ, այդ թվում՝ պաշտոնական տեղեկություններ և փաստաթղթեր փնտրելու և ստանալու կարգը և պայմանները: Որպես տեղեկատվության ազատության իրավունքն առարկայացնող միակ համապարփակ իրավական ակտ՝ ՏԱ մասին օրենքը թեև վերաբերում է յուրաքանչյուրին, սակայն լրագրողական գործունեության համար առանցքային գործիք է և լրագրողական ազատությունների ապահովման երաշխիք: Սրան զուգահեռ Հայաստանում քաղհասարակության ակտիվ մասնակցությամբ ձևավորվել է ՏԱ իրավունքի պաշտպանության դրական պրակտիկա՝ ներառյալ դատական պաշտպանության, ինչի շնորհիվ ՏԱ մասին օրենքի կարգավորումները մինչ օրս կենսունակ և արդիական են: Հատկաշատն է, որ ՏԱ օրենքի ընդունումից ի վեր այն չի ենթարկվել էական փոփոխությունների: Թեև բազմաթիվ փորձեր են արվել նախկին և ներկա կառավարությունների կողմից, սակայն քաղաքացիական հասարակության միասնական ջանքերի շնորհիվ հաջողվել է կանխել ՏԱ օրենքի անհաջող փոփոխությունների բոլոր փորձերը: Արդյունքում թեպետ հնարավոր է եղել խուսափել բազմաթիվ խոչընդոտներից, Օրենքը տեխնոլոգիական զարգացման և հաղորդակցման կանոնակարգերի զարգացման համատեքստում բարելավման կարիք ունի:

Վերջին տարիներին տեղեկատվության ազատության օրենսդրության զարգացմանն ուղղված էական քայլը 2022թ.-ին ՀՀ-ի կողմից [Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին կոնվենցիայի](#) վավերացումն է (այսուհետ նաև՝ Կոնվենցիա):¹ Քաղաքացիական հասարակությունը ի դեմս ԻԱԿ-ի դեռևս 2018-ից ակտիվ քայլեր սկսեց ձեռնարկել ուղղված Կոնվենցիայի վավերացմանը, քանի որ սա առաջին միջազգային փաստաթուղթն է, որով պետությունները ոչ միայն ճանաչում են տեղեկատվության մատչելիության իրավունքը, այլև համաձայնում են ապահովել այդ իրավունքի իրացումը և համագործակցել մատչելիության ոլորտում:² Փաստաթուղթը մի կողմից հաստատում է միջազգային պայմանագրերով և ՀՀ ներպետական օրենսդրությամբ սահմանված տեղեկատվության ազատության հիմնարար իրավունքը, մյուս կողմից՝ սահմանում է պետական մարմինների բաց և թափանցիկ աշխատելու պարտականությունը: ՀՀ-ն

¹ ՀՀ-ի կողմից Կոնվենցիայի վավերացման գործընթացի մասին առավել մանրամասն տես՝ https://foi.am/success_stories/3724 :

² Կոնվենցիայի բացատրական [գեկույցը](#):

2023թվականի հունվարին Եվրոպայի խորհրդի տեղեկատվության մատչելիության խմբին ներկայացրել է առաջին [ազգային զեկույցը](#)՝ AIG/Inf(2023)02:

Մեկ այլ դրական փոփոխություն էր 2021թ.-ի դեկտեմբերին տեղեկատվության ազատության իրավունքի խախտման համար վարչական պատասխանատվության չափի բարձրացմանն ուղղված՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հանրագրի ընդունումը:³ Փաստաթուղթը ներկայացնում էր Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին առաջարկություն և նախագիծ, որով առաջարկվում էր տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման համար կիրառվող վարչական տուգանքների չափերը բարձրացնել, ինչն ընդունվեց նախ ՀՀ արդարադատության նախարարության, այնուհետև նաև Ազգային ժողովի կողմից: Օրենսդրական փոփոխությունն ուժի մեջ մտավ 2022թ.-ի հոկտեմբերի 14-ին՝ սահմանելով, որ տեղեկություն տնօրինողների կողմից տեղեկությունն ապօրինաբար չտալու համար նախատեսվում է 50-ից 70 հազար դրամի չափով տուգանք, իսկ նույն խախտումը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքում նախկին 50-ից 100 հազար դրամի փոխարեն նախատեսվել է 100-ից 150 հազար դրամի չափով տուգանք: Այս նախաձեռնության հաջող իրականացումը դիտվեց որպես քաղաքացիական հասարակության և կառավարության միջև համագործակցության դրական օրինակ՝ ՏԱ խախտման համար պատասխանատվությունն ուժեղացնելու նպատակով:

Ոլորտի բարելավմանն ուղղված մեկ այլ ռազմավարական քայլ էր «ՀՀ ապատեղեկատվության դեմ պայքարի 2024-2026 թվականների [հայեցակարգի](#) և դրանից բխող [գործողությունների ծրագրի](#)» ընդունումը 2023թ.-ի դեկտեմբերի 27-ին: Այս ռազմավարական փաստաթղթերը, ի թիվս այլնի, նպատակ են հետապնդում նպաստել պաշտոնական տեղեկությունների մատչելիությանը և պրոակտիվ հաշվետվողականությանը՝ ակնկալելով պետական կառույցների առավել թափանցիկ, հաշվետու աշխատանքին միտված ձևաչափերի և հարթակների գործարկում, առկա ռեսուրսների բարելավում, պետական կառույցներում հաղորդակցության բարելավում, մեդիագրագիտության և փաստերի ստուգման հմտությունների զարգացում:⁴

ՏԱ օրենսդրության միջազգային ինդեքսում 2023թ.-ին 140 երկրների ցանկում Հայաստանի Հանրապետությունը զբաղեցնում է 37-րդ տեղը:⁵ Չնայած զգալի առաջընթացին, տեղեկատվության ազատության ոլորտը լի է բազմաթիվ ու տարաբնույթ խնդիրներով, որոնք վերաբերում են ինչպես ոլորտի իրավական կարգավորումներին, այնպես էլ դրանց կիրառմանը և էական խոչընդոտ են լրագրողական ազատությունների և մեդիա առաքելության իրականացման տեսանկյունից:

Այս հետազոտության շրջանակում ուսումնասիրվել է Հայաստանում լրագրողների տեղեկություն ստանալու պրակտիկան, վեր են հանվել առկա խնդիրները և ներկայացվել գործնական առաջարկներ ուղղված բացահայտված խնդիրների վերացմանը, առկա ռիսկերի չեզոքացմանը և լրագրողների տեղեկություն ստանալու իրավունքի լիարժեք իրացմանն ու պաշտպանությանը:

³ ԻԱԿ-ի ներկայացրած հանրագրի մասին առավել մանրամասն տես՝ https://foi.am/success_stories/3696 :

⁴ Ապատեղեկատվության դեմ պայքարի [հայեցակարգը](#) և [գործողությունների ծրագիրը](#):

⁵ [Global Right to Information rating, Armenia](#)

ԲԱԺԻՆ 1.

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ

Տեղեկատվության ազատության ապահովման չափանիշներից է տեղեկություն ստանալու հարցումներին պատշաճ ընթացք տալը: Տեղեկություն տնօրինողները տեղեկություն ստանալու յուրաքանչյուր հարցման քննարկումը և դրան պատասխանելը պետք է իրականացնեն այնպես, ինչպես նախատեսված է օրենսդրությամբ՝ առանց որևէ խտրականության և բացառության և անկախ նրանից, թե ով է դիմել, ինչ հարցով կամ ինչ եղանակով:

Ըստ հետազոտության արդյունքների՝ հարցված 77 լրագրողի 75.3 տոկոսը նշել է, որ տեղեկություն ստանալու իրենց հիմնական աղբյուրը տեղեկություն տնօրինողներին ուղղված հարցումներն են: Ուստի, անպատասխան մնացած հարցումները կամ տրամադրված թերի պատասխաններն էականորեն խոչընդոտում են լրագրողներին կատարել իրենց մասնագիտական գործունեությունը: Ստորև ներկայացնում ենք այն բազմաբնույթ խնդիրները, որոնց առերեսվում են լրագրողները տեղեկություն ստանալու գործընթացում:

1.1 Հարցումը հիմնավորելու պահանջը

Տեղեկություն ստանալու գործընթացում ամենից հաճախ հանդիպող խախտումներից է լրագրողների հարցումը հիմնավորելու պահանջը:

Օրենսդրական կարգավորումը


«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «4. Դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը»:

Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պաշտոնական փաստաթղթի համար հարցում ներկայացնողը պարտավոր չէ պաշտոնական փաստաթղթի մատչելիության համար հիմնավորում ներկայացնել:

Հարցմանը մասնակցած լրագրողները նշել են, որ տեղեկություն տնօրինողները երբեմն պահանջում են հիմնավորել, թե ինչու է լրագրողը պահանջում տրամադրել այս կամ այն տեղեկությունը: Ինչպես երևում է պատկեր 1-ում՝

- լրագրողների 61%-ը նշել է, որ տարբեր պարբերականությամբ բախվում են այնպիսի իրավիճակների, երբ տեղեկություն տնօրինող պետական մարմինը պահանջում է հիմնավորել, թե ինչու է լրագրողը տվյալ հարցումը ներկայացրել և/կամ ինչպես է պատրաստվում օգտագործել պահանջած տեղեկությունները:
- Լրագրողների միայն 39%-ն է արձանագրել, որ հարցումը ստանալուց հետո երբեք պետական մարմինները չեն պահանջում հիմնավորել հարցումը:
- Մյուս կողմից, 5.1 տոկոսը նշել է, որ գրեթե միշտ է բախվում այդ պահանջին:

Պատկեր 1




Հարցմանը մասնակից լրագրողները նշում են, որ հաճախ հիմնավորումը պահանջում են ոչ թե հարցմանն ի պատասխան ուղարկված գրությամբ, այլ բանավոր, լրագրողի հետ հեռախոսով կապ հաստատելու միջոցով: Հարցազրույցներին մասնակցած պետական կառույցի ներկայացուցիչներն առաջարկում են հարցին նայել այլ կողմից. «Երբեմն լրագրողի հարցումն այնքան էլ հստակ չէ, կամ հարցից ակնհայտ է, թե ինչ համատեքստում է օգտագործվելու պատասխանը, բայց նաև հասկանում ես, որ մասնագիտացված ստորաբաժանման պաշտոնական լիարժեք պատասխանը լրագրողի համար բավարար և օգտակար չի լինելու, ուստի նման դեպքերում կարող է դիմենք լրագրողին, որ հստակեցնի հարցը»:

Իհարկե, հարցումը հստակեցնելու խնդրանքը չի կարող նույնացվել հարցման հիմնավորման պահանջի հետ: Լրագրողները նշում են, որ հիմնավորման պահանջներն առավել հաճախ ներկայացվում են այն դեպքերում, երբ հարցումներն առնչվում են զգայուն թեմաների՝ օրինակ ֆինանսական միջոցների չհիմնավորված ծախսերի, կասկածելի գնումների, գնման մրցույթների կամ կոռուպցիոն ռիսկերի բացահայտումներին և այլն: Նման դեպքերում ակնհայտ է լինում, որ գործ ունենք անօրինական պահանջի հետ: Հարցումը հիմնավորելու պահանջ ներկայացնելու պրակտիկան վկայում է ոչ միայն ՏՍ օրենքի և Կոնվենցիայի ուղղակի խախտման, այլ նաև այն մասին, որ տեղեկություն տնօրինողների շրջանում առկա է գիտելիքի և հմտությունների պակաս՝ տեղեկատվության ազատության իրավունքի մասին ընդհանրապես և Տեղեկատվության ազատության մասի օրենքի և Կոնվենցիոն կարգավորումների մասին մասնավորապես:

Թեև ՏՍ օրենսդրությունը սահմանում է հստակ կանոն, որ հարցմամբ դիմողը պարտավոր չէ հիմնավորել իր հարցումը, այնուամենայնիվ, հարցմանը մասնակցած լրագրողների 36.4%-ը նշել է, որ գրեթե միշտ սեփական նախաձեռնությամբ գրավոր հարցման մեջ տալիս է հիմնավորում, թե ինչու է խնդրում տվյալ տեղեկությունը, 22 տոկոսը երբեմն է այդպես վարվում, ևս 22 տոկոսը՝ հազվադեպ (տես պատկեր 2): Ընդհանուր առմամբ, հարցումը երբեք չի հիմնավորում լրագրողների միայն 19.4 տոկոսը:


Պատկեր 2



Անշուշտ, հարցմամբ դիմող լրագրողը կարող է հարցման մեջ ներառել տեղեկություն ստանալու հիմնավորում: Սա կարող է պայմանավորված լինել տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով (զրագրության սեփական ձևական կանոններ, լրագրողական նյութում օգտագործելու համար այս կամ այն նպատակի փաստաթղթային արձանագրում և այլն): Բայց կարևոր է արձանագրել, որ **հարցումը հիմնավորելը բացառապես լրագրողի իրավունքն է, և ոչ՝ պարտականությունը:**

Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ հարցված լրագրողների 68.8 տոկոսը նշել է, որ տեղեկություն ստանալու հարցման մեջ միշտ հղում է անում ՏԱ մասին օրենքին և ՀՀ Սահմանադրությանը (տես՝ պատկեր 3) այն առավել փաստարկված և պաշտպանված դարձնելու համար:

Պատկեր 3



Նշենք, որ դեռևս 2008թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի իրականացրած համանման հետազոտության շրջանակում հարցված լրագրողների միայն 31 տոկոսն էր նշել, որ որոշ դեպքերում հղում է անում ՏԱ օրենքի դրույթներին:⁶ Սա վկայում է այն մասին, որ լրագրողները պրակտիկայում զգացել են իրավական նորմերին հղում անելու դրական ազդեցությունը տեղեկություն տնօրինողների վրա, որպեսզի վերջիններս ավելի պատրաստակամ և հակված լինեն տրամադրել պահանջած տեղեկությունները: Նախորդ հետազոտության արդյունքների հիման վրա արձանագրելով այս խնդիրը՝ ԻԱԿ-ը կազմեց և լայնորեն շրջանառեց տեղեկություն ստանալու հարցման [օրինակելի ձևը](#), որը պարունակում է հղումներ անհրաժեշտ իրավական նորմերին: Այսօր այս ձևը հրապարակված է բազմաթիվ պետական մարմինների պաշտոնական կայքերում որպես հարցմամբ դիմելու օրինակելի ձև, ինչպես նաև լայնորեն օգտագործվում է քաղաքացիական հասարակության և լրագրողների կողմից տեղեկություն ստանալու գործընթացում:

Արձանագրենք, որ պրակտիկայում լրագրողները հաճախ են բախվում իրենց հարցումներն հիմնավորելու տնօրինական պահանջին: Մինչդեռ, տեղեկություն տնօրինողը ոչ մի պարագայում իրավունք չունի պահանջել, որ դիմողը հիմնավորի հարցումը: Նման պահանջ ներկայացնելը Տեղեկատվության ազատության մասին օրենքի և Կոնվենցիայի դրույթների ուղղակի խախտում է: Ըստ այդմ, հարցումը չհիմնավորելը որևէ կերպ չի կարող տեղեկությունը տրամադրելու մերժման հիմք լինել:

1.2 Տեղեկություն ստանալու հարցումներն ուղարկելու եղանակները

Լրագրողներն իրենց տեղեկություն ստանալու հարցումներն ուղարկում են մի քանի եղանակով՝ այս գործընթացում հանդիպելով տարբեր խնդիրների:

Օրենսդրական կարգավորումը

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքը սահմանում է տեղեկություն տնօրինողին հարցում ներկայացնելու երկու եղանակ՝ գրավոր և բանավոր: Օրենքը բանավոր հարցմանը պատասխանելու միայն երեք դեպք է նախատեսում՝ երբ

- պահանջվող տեղեկության տրամադրումը կարող է կանխել պետական, հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը.
- անհրաժեշտ է ճշտել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի մոտ համապատասխան տեղեկության առկայության փաստը.

անհրաժեշտ է պարզաբանել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի կողմից գրավոր հարցումների քննարկման կարգը:

Բանավոր հարցման նման սահմանափակ կիրառման պայմաններում լրագրողական համայնքում տեղեկություն փնտրելու հիմնական ձևը գրավոր հարցումներն են: Տեղեկատվության ազատության մասին օրենքը գրավոր հարցումը տեղեկություն տնօրինողին ներկայացնելու ձևեր և այդ ձևերի առանձնահատկություններ չի սահմանում: Արդյունքում, տեղեկություն փնտրողներն ազատ են գրավոր հարցումը

⁶ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի 2008թ.-ին կատարած [հետազոտությունը](#), էջ 19:

տեղեկություն տնօրինողին ներկայացնել օրենքով չարգելված ցանկացած եղանակով, ինչպես նաև, բոլոր այն ձևերով/գործիքներով (էլեկտրոնային փոստ, կայքեր, միասնական հարթակ և այլն), որոնք տվյալ պահին սահմանված են որպես տեղեկություն տնօրինողների հետ հաղորդակցվելու պաշտոնական գործիքներ:


Այսպիսով, լրագրողները գրավոր հարցումներ ներկայացնելու մի քանի հնարավորություն ունեն՝

- թղթային տարբերակով՝ փոստային առաքմամբ,
- էլեկտրոնային պաշտոնական փոստով,
- հարցումներ ներկայացնելու միասնական հարթակով՝ www.e-request.am,
- անմիջապես պաշտոնական կայքերում նախատեսված առցանց գործիքներով:

Ինչպես ցույց են տալիս հարցումները՝ լրագրողների գերազանց մեծամասնությունը նախապատվությունը տալիս է էլեկտրոնային եղանակով հարցումն ուղարկելուն: Մասնավորապես.

- պաշտոնական փոստով հարցումներն ուղարկելը նախընտրում է լրագրողների 71.4%-ը (պատկեր 4):
- Այնուհետև հաջորդում է հարցումների միասնական հարթակը՝ e-request.am-ը, 13%-ով:
- Լրագրողների 9%-ը հարցումներն ուղարկում է տեղեկություն տնօրինողի պաշտոնական կայքում առկա առցանց համակարգով,
- իսկ 3.9%-ը գրավոր հարցումը նախընտրում է ուղարկել սոցիալական հարթակներով:
- Թղթային տարբերակով հարցումներն ուղարկում է լրագրողների միայն 2.6%-ը:

Պատկեր 4



Այսպիսով, լրագրողների գերազանց մեծամասնությունը նախընտրում է հարցումներն ուղարկել էլեկտրոնային փոստով՝ հարցումն ուղղելով հաճախ միաժամանակ և՛ գերատեսչության պաշտոնական էլեկտրոնային հասցեին, և՛ հանրային կապերի ստորաբաժանումը ղեկավարող անձին/մամուլի քարտուղարին: Հարցազրույցներում փորձագետների զգալի մասը նշել է, որ լրագրողները մեծամասամբ իրենց աշխատանքային փորձը հաշվի առնելով են էլեկտրոնային փոստը նախընտրում,

սակայն նաև նշում են, որ «լրագրողներին թվում է, թե այդպես ավելի անձնավորված է հարցումը, և իրենք գիտեն, թե խնդիր լինելու դեպքում կոնկրետ ով է պատասխանատուն»: Մյուս կողմից, լրագրողները նշում են, որ պաշտոնական էլ փոստով հարցում ուղարկելն առավել հասցեական է: Նրանց կարծիքով, այս եղանակը նաև ամենաարագն է՝ առանց ավելորդ բյուրոկրատիայի:

Հարցումների միասնական հարթակը

Թեև կառավարությունը դեռևս 2018 թվականին գործարկել է հարցումներ ներկայացնելու միասնական առցանց հարթակը՝ e-request.am-ը,⁷ այնուամենայնիվ, լրագրողների միայն 13% է նշել, որ օգտագործում է այն:

Հետազոտության շրջանակում դիտարկվել է հարցումներ ներկայացնելու միասնական հարթակի դերը լրագրողների՝ հարցում ուղարկելու պրակտիկայի համատեքստում. որքա՞ն հաճախ են օգտվում լրագրողները միասնական հարթակից իրենց հարցումները տեղեկություն տնօրինողներին ուղարկելու համար, ինչո՞ւ են խուսափում, որո՞նք են հարթակի կիրառության հիմնական առավելությունները ու դրա նվազ կիրառման պատճառները:

Հարթակը կոչված է հեշտացնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը՝ հնարավորություն տալով քաղաքացիներին իրենց դիմումները, հարցումներն ու բողոքները պետական մարմիններ ուղարկել մեկ ընդհանուր հարթակից: Այն հնարավորություն է տալիս ուղարկել հարցումը, հետևել հարցման ընթացքին, ինչպես նաև ստանալ հարցման պատասխանը:

2019 թ.-ի հոկտեմբերից e-request հարթակի սպասարկումն իրականացնող «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի տրամադրած տվյալների համաձայն՝ 2024 թ.-ի մարտի 31-ի դրությամբ՝ համակարգն ընդգրկում է 231 կազմակերպություն, որոնց միայն 2024 թ.-ի առաջին եռամսյակում ուղարկվել է 8602 տեղեկություն ստանալու հարցում: e-request հարթակով ուղարկված հարցումների վերջին 3 տարվա վիճակագրությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր տարի ուղարկվող հարցումների թիվն աճում է. միայն 2023թ.-ին հարցումների թիվը նախորդ տարվա համեմատ աճել է ավելի քան 47%-ով: 2021 թ.-ին համակարգի միջոցով ուղարկվել է 15493 հարցում, 2022 թ.-ին՝ 19204, 2023-ին՝ 28253 հարցում:

Չնայած այս ակնհայտ բարելավմանը՝ ինչպես երևում է պատկեր 4-ում՝ լրագրողների շրջանում համակարգը մեծ տարածում չունի: Սա կարող է պայմանավորված լինել մի քանի հանգամանքով.

Բացասական փորձառություն: Լրագրողների զգալի մասն այսօր համակարգից չի օգտվում նախկինում ունեցած բացասական փորձառության պատճառով: Համակարգի ստեղծման առաջին շրջանում այն ուներ մի շարք տեխնիկական խնդիրներ, որոնք աստիճանաբար լուծվեցին: Հարթակը սկսեց ավելի արդյունավետ աշխատել, դրա հետ ճիշտ և արդյունավետ աշխատել սովորեցին նաև դրանում ընդգրկված պետական կառույցների համապատասխան մասնագետները: Այս գործընթացին մեծապես

⁷ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 26-ի 524-Ն որոշմամբ ամրագրվեցին էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի գործարկման իրավական հիմքերը:

նպաստեցին նաև e-request-ից օգտվող լրագրողների և ՔՀԿ ներկայացուցիչների արձագանքները: Սակայն տարբեր պատճառներով առաջին շրջանում տեխնիկական դժվարությունների հանդիպած լրագրողներն այսօր ուղղակի չեն օգտագործում հարթակը:

Էլեկտրոնային ստորագրության պահանջ: Օրենսդրական կարգավորումների համաձայն՝ հարթակը պահանջում է, որ հարցումներն ուղարկվեն ստորագրված, այս դեպքում՝ էլեկտրոնային ստորագրության միջոցով: Հարթակի գործարկման առաջին փուլում էլեկտրոնային ստորագրության անհրաժեշտության մասին ծանուցումը օգտատերը տեսնում էր հարցում ուղարկելու գործընթացի ամենասկզբում և եթե չգիտեր, որ կարելի է նաև առանց ստորագրության փաստաթուղթ ուղարկել, ապա էլեկտրոնային ստորագրություն և/կամ սարք չունենալու դեպքում հենց սկզբից հրաժարվում էր հարցումը հարթակով ուղարկելու մտքից:

Հաշվի առնելով տեղեկատվության ազատության ոլորտում ձևավորված դրական պրակտիկան և հարցումը ստորագրելու բովանդակային անհրաժեշտության բացակայությունը, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի առաջարկով հարթակի հարցումների բաժնի առաջամասից դուրս է բերվել ստորագրության պարտադիր լինելու մասին ծանուցումը: Սա մեծապես փոխեց ընկալումը: Սակայն հարթակից հարցում ուղարկելիս գործընթացի վերջին փուլում համակարգն առաջարկում է ստորագրել փաստաթուղթը կամ ուղարկել առանց ստորագրության և «չստորագրել» կոճակն ընտրելու դեպքում տեղեկացնում է. *«Քանի որ չստորագրված նամակը չի հավաստում, որ ուղարկվել է հենց Ձեր կողմից, պետական մարմինը կարող է դրան ընթացք չտալ կամ պահանջել լրացուցիչ հավաստում»*: Գերատեսչությունները որպես կանոն ընդունում են ստորագրված հարցման լուսապատճենը, նաև պատասխանում են առանց ստորագրության հարցումներին, սակայն ստորագրության պահանջն ու ծանուցումը, միննույն է, լրագրողներին վանում են. ավելի ապահով է թվում փաստաթուղթն ուղարկել անձնական կամ լրատվամիջոցի պաշտոնական էլեկտրոնային փոստից: Ի դեպ, Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դիմողը կարող է հարցումն անանուն ուղարկել, բացառությամբ այն դեպքերի, երբ ինքնության բացահայտումը կարևոր է հարցմանն ընթացք տալու համար:

Սովորություն, իրազեկության և վստահության պակաս: Լրագրողների մի մասն ի վերջո խոստովանում է, որ հարթակը չօգտագործելը ավելի շատ կապված է սովորության և հոգեբանական հանգամանքների հետ, քան իրական խոչընդոտների: Հաճախ լրագրողները առաջնորդվում են արդեն իսկ փորձած ու արդյունավետությունը հաստատած մեխանիզմներով: Լրագրողները նշում են նաև, որ այնքան էլ չեն վստահում համակարգին, քանի որ իրենց կարծիքով, համակարգից օգտվելիս նվազում է հարցման ընթացքի կառավարման շրջանակը: Լրագրողները նախընտրում են առավել անձնավորված մոտեցումը, իսկ խոսնակների առաջարկը՝ հարցումն ուղարկել e-request-ով, երբեմն գնահատում՝ «ցրոցի»՝ ինչպես իրենք են ասում: Լրագրողները նախընտրում են աշխատել անձանց, ոչ թե համակարգերի հետ, հիմնականում համակարգի նկատմամբ վստահության պակասի և այդ համակարգի անկանխատեսելիության պատճառով: Միաժամանակ միասնական հարթակը ոչ միայն սեփական հարցումների շտեմարանը պահպանելու հնարավորություն է տալիս, այլև ավելի հստակ է ցույց տալիս, թե որտեղ է տվյալ պահին գտնվում հարցումը, ով է աշխատում դրա վրա և ինչ ժամկետներում է գերատեսչությունը նախատեսում ուղարկել պատասխանը:

Լրագրողների գերազանց մեծամասնությունը նախապատվությունը տալիս է հարցումներն էլեկտրոնային եղանակով ուղակեղուն: Ամենատարածվածը էլեկտրոնային պաշտոնական փոստով ուղարկելն է: Կառավարության գործարկած հարցումների միասնական հարթակը ամենատարբեր պատճառներով դեռևս լայն ճանաչում չունի լրագրողների շրջանում: Լրագրողները ամբողջական և հստակ պատկերացում չունեն, թե իրականում ինչպես է աշխատում միասնական հարթակը և թե ինչ գործիքներ կան մշակված հարցումների ընթացքին հետևելու և դրանց արդյունքներն համակարգելու համար:

1.3 Հարցումների պատասխանների բովանդակությունը և տեխնիկական պահանջների ապահովումը

Տեղեկություն ստանալու գործընթացում լրջագույն խնդիրներից է հարցումներին տրված պաշտոնական պատասխանների որակը: Դրանք որոշ դեպքերում թերի են, անորոշ, ընդհանրական, նաև մի քանի հարց պարունակող հարցումների դեպքում երբեմն հարցերից մի քանիսն անտեսվում են՝ դիտավորյալ կամ անփութորեն:


Օրենսդրական կարգավորումը

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ «Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով (...) 3) տեղեկություններ փնտրող անձին տրամադրել **հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն**»:

«Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության՝ 2015 թ.-ի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշմամբ (այսուհետ 1204-Ն որոշում) հավելված 2-ի 8-րդ կետի համաձայն՝

«8. Հարցման պատասխանը պետք է լինի հավաստի և լրիվ՝ պարունակելով բոլոր առաջադրված հարցերի հիմնավոր պատասխանները: Դիմողի կողմից մեկից ավելի հարցերի առաջադրման դեպքում պետական մարմինը հերթական համարակալման միջոցով տրամադրում է բոլոր հարցերի հավաստի և լրիվ պատասխանները:»:

Հարցմանը մասնակցած լրագրողների կեսից ավելին 54.5%-ը հարցումների պատասխանների բովանդակությունը գնահատել է անբավարար (տես՝ պատկեր 5): Միննույն ժամանակ հարցված լրագրողներից որևէ մեկը չի նշել, որ հարցումների պատասխանները լիովին բավարարում են իրեն:



Լրագրողները նշում են, որ տրամադրված տեղեկությունները հաճախ ամբողջական չեն, թերի են կամ լրոգած ձևակերպումներով, բացակայում են հարցմամբ պահանջված այս կամ այն տեղեկությունները:


Օրենսդրության վերոնշյալ կարգավորումների համատեքստում լրագրողների շրջանում

«Բովանդակությանն առնչվող հիմնական խնդիրներից է այն, որ հաճախ կետերով ուղարկված կոնկրետ հարցմանը տրամադրում են լրոգված պատասխան, որոնք վերաբերում են հարցերից մի քանիսին միայն: Որոշ դեպքերում այդ պատասխանները խիստ մակերեսային են ու, թող չնեղանան մեր գործընկերները, երբեմն այդ տեքստերը պարզապես բառակույտ են հիշեցնում, որոնցից ոչինչ հասկանալ հնարավոր չէ: Կարծես դա արվում է միայն նրա համար, որ չքննադատեն գերատեսչությանը, թե չի պատասխանել հարցմանը, բայց պատասխանը նույնն է, եթե չպատասխանեին, ոչնչով չէր տարբերվի»:

«(...) պետական մարմիններից շատ դժվար է ամբողջական, համապարփակ տեղեկատվություն ստանալ մեր կատարած հարցումների վերաբերյալ: Լինում են դեպքեր, երբ հարցերը ուղարկում ենք, ստանում ենք կիսատ պատասխան, հետ ենք ուղարկում: (...) Այս ամենը դրսևորվում է հարցումների պատասխաններում, երբ լրագրողը 4-5 հարց մանրակրկիտ և հնարավորինս պարզ ձևակերպած՝ ուղարկում է գերատեսչություն և ստանում է մի պարբերություն պատասխան, որի բովանդակությունը, այսպես ասած՝ քո հարցերի մասին չէ, ըստ էության, բովանդակային պատասխան չկա»: «Կա նաև ոչ կոմպետենտ աշխատողների հարցը, մոտիվացիայի պակասը, որ իրենք իրենց ընդհանրապես պատասխանատու չեն զգում, որպեսզի ամբողջական տեղեկատվություն փոխանցեն լրագրողներին և հանրությանը»:

Իրականացված հարցման արդյունքները խնդրահարույց են, քանի որ հարցվածներից գրեթե կեսի դեպքում խոսք է գնում հարցումների թերի պատասխանների՝ ոչ լիարժեք պատասխանի տրամադրման մասին: Ընդ որում, տվյալ դեպքում խոսքը ոչ միայն և ոչ այնքան հարցման պատասխանի պատշաճության՝ լրագրողի սուբյեկտիվ գնահատականի մասին է (պատասխանը բավարարել-չի բավարարել), այլ նաև 1204-ն որոշմամբ սահմանված բավականին պարզ և հստակ պահանջի խախտման մասին է: Հարցված լրագրողների գրեթե կեսը (49.3%) նշել է, որ մի քանի հարց պարունակող (համարակալված հարցերով) հարցումների պատասխանները «հազվադեպ» կամ «երբեք» համարակալված չեն լինում (տես պատկեր 6):

Պատկեր 6



Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ մեկից ավելի տեղեկություն պահանջող հարցման պատասխանում պահանջված տեղեկությունները կամ հարցերի պատասխանները համարակալելու պահանջը ձևական չէ, այն նպատակ ունի ապահովելու, որ տեղեկություն տնօրինողը դիտավորյալ կամ անուշադրությամբ չկարողանա անտեսել այս կամ այն տեղեկության պահանջը, հարցմամբ ներկայացված այս կամ այն հարցը և հարցմանը տրամադրի լիարժեք պատասխան:

Մեկից ավելի հարցերի առաջադրման դեպքում հարցման պատասխանով տրամադրվող տեղեկությունը (հարցերի պատասխաններն) առանց հերթական համարակալման ներկայացնելու պրակտիկան վկայում է այն մասին, որ տեղեկություն տնօրինողները կամ դիտավորյալ անտեսում են հարցմանը պատասխանելու օրենսդրությամբ սահմանված կարգը, կամ տեղյակ չեն նշված կարգավորման մասին կամ երկուսը միասին: Ցանկացած պարագայում, նման պրակտիկան հակասում է օրենքին: Մյուս կողմից, սակայն, պետք է նշել, որ երբեմն խնդիրը կարող է նաև առաջանալ լրագրողների ոչ հստակ ձևակերպած հարցումների պատճառով:

Այսպիսով, լրագրողների կեսին չի բավարարում իրենց հարցումներին տրվող պաշտոնական պատասխանների որակը: Պատասխանները որոշ դեպքերում անորոշ են, թերի, պարունակում են բարդ տերմինաբանություն, նաև մի քանի հարց պարունակող հարցումների դեպքում երբեմն հարցերից մի քանիսն անտեսվում են՝ դիտավորյալ կամ անփութորեն՝ խախտելով օրենսդրությունը:

1.4 Խտրականությունը տեղեկություն ստանալու գործընթացում

Տեղեկություն ստանալու գործընթացում ուշադրության է արժանի հատկապես խտրականության խնդիրը: Լրագրողական համայնքը նշում է, որ տեղեկություն տրամադրելիս պետական մարմինները խտրականություն են դնում տարբեր լրատվամիջոցների և լրագրողների միջև:

Օրենսդրական կարգավորումը

ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝


«Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապահովի յուրաքանչյուր անձի՝ հարցման հիման վրա, առանց որևէ խտրականության պետական մարմինների տնօրինության տակ գտնվող պաշտոնական փաստաթղթերի մատչելիության իրավունքը:

Հարցմանը մասնակցած լրագրողների 64,5%-ը նշում է, որ տեղեկություն տրամադրելիս պետական մարմինները խտրականություն են դնում տարբեր լրատվամիջոցների և լրագրողների միջև: 32,9 %-ը դժվարացել է պատասխանել այս հարցին և հարցվածների ընդամենը 2,6%-ն է կարծում, որ տեղեկություն տնօրինողները խտրականություն չեն դրսևորում (տես պատկեր 7):

Պատկեր 7



Լրագրողները հարցազրույցի ընթացքում հետևյալ կերպ են նկարագրել խտրականության դրսևորումները.

«Խոսակների պատասխանների որակը մեծապես կախված է միջանձնային հարաբերություններից: (...) կան խոսակներ, որոնք կոնկրետ ՋԼՄ-ների լրագրողների զանգերին են պատասխանում, իսկ անցանկալիներին չեն պատասխանում կամ ցրում են»:
 «Եղել են դեպքեր, երբ մեզ չեն պատասխանել, բայց մի քանի օր անց տեսել ենք, որ օրինակ Հանրային հեռուստաընկերությանն ինֆորմացիա են տվել կամ անգամ հարցազրույց: Եթե ասեմ, որ խնդիրը շատ ընդգծված է, ոչ, բայց երբեմն ականատես ենք լինում նման իրավիճակների»:
 «Յուրային լրատվամիջոցներին հեշտությամբ և արագ են տրամադրում տեղեկություն: Օրինակ, դու հարցում ես անում մի թեմայով և սպասում պատասխանի մեկ ամիս, մեկ էլ տեսնում ես հանրայինը այդ թեմայով նյութ է պատրաստում, ներկայացնում այն, ինչ դու պահանջել ես»:

Պրակտիկան վկայում է, որ խնդիրը մեծամասամբ կախված է նրանից, թե ինչպիսի լրատվամիջոց է ներկայացնում լրագրողը: Եթե լրատվամիջոցն ընդդիմադիր է և աչքի է ընկնում կառավարության սուր քննադատությամբ, այս լրատվամիջոցի լրագրողների հարցումներն առավել հաճախ են արժանանում խախտումների և ժամկետանց պատասխանների: Մինչդեռ, տեղեկատվության ազատության իրավունքը յուրաքանչյուրին է, և այդ իրավունքի որևէ խտրական իրացում հակասում է սահմանադրությանը:

Այսպիսով, տեղեկություն ստանալու գործընթացում խտրականության դրսևորումները կախված են լրագրողների և լրատվամիջոցների պայմանական խմբային բաժանումներից՝ յուրային-ոչ յուրային, ընդդիմադիր-դիմադիր: «Անցանկալի» լրատվամիջոցներից ստացված հարցումներին որոշ դեպքերում չեն տրվում ժամանակին և լիարժեք պատասխաններ: Մինչդեռ, բոլոր հարցումները, անկախ նրանից, թե ովքեր է դիմողը, պետք է քննարկվեն և պատասխան ստանան «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված կարգով և պայմաններով՝ առանց խտրականության: Տեղեկություն տնօրինողները պետք է ապահովեն, որ տեղեկություն ստանալու յուրաքանչյուր հարցում քննարկվի և պատասխան ստանա բացառապես օրենսդրությանը համապատասխան:

1.5. Տեղեկություն ստանալու հարցումներին պատասխանելու ժամկետները

Տեղեկություն ստանալու իրավունքի խախտումների հաջորդ խումբն առնչվում է հարցումներին պատասխանելու՝ օրենքով սահմանված ժամկետների պահպանմանը:

Օրենսդրական կարգավորումը

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը սահմանում է տեղեկություն ստանալու հարցումներն անարձագանք թողնելու երեք դեպք՝ եթե

- հարցումը չի պարունակում հարցման մեջ նշվելիք բոլոր տվյալները.
- պարզվում է, որ հարցման հեղինակի ինքնությանը վերաբերող տվյալները կեղծ են.
- դա նույն անձի կողմից նույն տեղեկությունն ստանալու պահանջով վերջին 6 ամսվա ընթացքում ներկայացված երկրորդ հարցումն է, բացառությամբ այն դեպքերի, երբ պահանջվող տեղեկությունը կարող է կանխել պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը:

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «7. Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում.

- 1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
- 2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
- 3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:»:

«ՏԱ մասին» օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ «10. Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:»:


«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ «3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:»:

Վերոնշյալ երեք դեպքերից բացի մնացած բոլոր դեպքերում տեղեկություն ստանալու հարցումը պետք է ստանա որևէ արձագանք՝ պահանջված տեղեկությունը ներկայացնելու, մերժելու, տեղեկության տրամադրման համար լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտության մասին հայտնելու, տեղեկությունը չունենալու մասին հայտնելու մասին: Տեղեկություն ստանալու հարցումներին արձագանքելու համար «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված 5-օրյա ընդհանուր ժամկետը հաշվարկվում է տեղեկություն տնօրինողի մոտ հարցումը ստացվելու պահից: Ընդ որում, օրենքում ընդգծված չէ, որ խոսքն աշխատանքային օրերի մասին է, ուստի,

իրավական ակտի նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից ելնելով նորմը մեկնաբանելու կանոնի համաձայն՝ ՏԱ մասին օրենքով սահմանված ժամկետները կարող են մեկնաբանվել որպես օրացուցային օրերով հաշվարկվող: Սակայն, գործնականում քաղաքացիական հասարակությունը հաշվի է առել, որ տեղեկություն տնօրինող մարմիններում որպես կանոն գործում է 5-օրյա աշխատանքային շաբաթ, և տեղեկություն տնօրինող մարմնի աշխատողներն ըստ էության զրկված են ոչ աշխատանքային օրերին տեղեկություն ստանալու գրավոր հարցումը քննարկելու հնարավորությունից: Արդյունքում, ձևավորված պրակտիկայի համաձայն՝ հարցմանն արձագանքելու համար օրենքով սահմանված ժամկետները հաճախ հաշվարկվում են աշխատանքային օրերով: Տվյալ դեպքում օրենքի մեկնաբանության հարցում վարչական պրակտիկան հաշվի առնելով վերապահում է արվել հոգուտ տեղեկություն տնօրինողի:

Արձանագրենք, որ հարցմանը մասնակցած լրագրողների միայն 35%-ն է նշել օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում պատասխան ստանալու մասին: Այսպիսով, ստացվում է, որ օրենքով սահմանված ժամկետում պատասխան տրվում է միայն ամեն 3-րդ հարցմանը: Լրագրողների 37.7%-ը նշել է, որ պատասխանները ստանում է միջինում 6-10 օրվա ընթացքում օրենքով սահմանված 5-օրյա ժամկետի փոխարեն, իսկ 26%-ը նշել է, որ պատասխաններ ստանում է 11-30 օրվա ընթացքում: Լրագրողների 1.2%-ը նշել է մի քանի ամիս անց պատասխան ստանալու մասին (*տես՝ պատկեր 8*): Դրական է այն, որ հարցմանը մասնակցած որևէ լրագրող չի նշել անպատասխան մնացած հարցման մասին:

Պատկեր 8



Ի դեպ, բավական հետաքրքիր է համադրումը 2008թ.-ին կատարած համանման հետազոտության արդյունքների հետ, որոնց համաձայն՝ հարցված լրագրողների 16 %-ը նշել է, որ հարցման պատասխանը ստացել է 1-3 ամսվա ընթացքում, իսկ 10%-ը նշել է, որ ընդհանրապես պատասխան չի ստացել:⁸ Թեև առաջընթացն ակնհայտ է, սակայն իրավիճակը դեռևս չի կարելի բավարար համարել, երբ ժամկետանց պատասխանները

⁸ Լրագրողների տեղեկություն ստանալու իրավունքը, [Հետազոտություն](#) ԻԱԿ, 2008, Էջ 36:

լրագրողների մասնագիտական պարտականությունների կատարման տեսանկյունից լրջագույն խոչընդոտ են:

«Անհարկի ձգձգումները համատարած են, հաճախ օրենքով նախատեսված 5 օրը լրանալուց հետո տեղեկացնում են, որ կպատասխանեն 30 օրվա ընթացքում: Երբեմն էլ 5 օր լրելուց հետո պատասխանում են, որ հարցի հասցեատերն իրենք չեն»:


«Տարբեր մարմինների դեպքում պատկերը տարբեր է: Օրինակ, ֆիլմ պատրաստելու նպատակով հարցում եմ ուղարկել: Հարցմանը պատասխանել են երկու ամիս ուշացումով: Հարցումն ուղարկել եմ 2023թ.-ի նոյեմբերին, պատասխանել են 2024թ.-ի հունվարին, երբ արդեն ֆիլմը պատրաստ էր: Հարցումն ուղարկել եմ էլ. փոստով: Ձանգահարել են երկու ամիս անց, պատճառաբանել, թե ուղարկել են պատասխանը փոստով, սակայն հետ է եկել նամակը, դրանից հետո ուղարկել են էլ. փոստով»:

«Պետական մարմինները չարաշահում են 5 օրվա կանոնը ու միշտ ուղարկում վերջին՝ 5-րդ օրը լրանալուց հետո... հաճախ այդ պատասխանը կարող է լինել տեղեկություն տրամադրելու մերժում, որը փաստորեն գրելու համար 5-10 օր սպասեցնում են»:

Լրագրողները դժգոհում են, որ հաճախ են նաև դեպքեր, երբ պետական մարմինները պատասխանում են միայն 5-րդ օրը՝ ներառյալ մերժում կամ լրացուցիչ ժամանակ խնդրելու դեպքում: Պետք է նկատի ունենալ, որ հարցմանը պատասխանելու համար սահմանված 5 օրը հնարավոր առավելագույն ժամկետն է, և տեղեկություն տնօրինողը ոչ թե պետք է սպասի նշված ժամկետի ավարտին, այլ տեղեկությունը տրամադրի այն ստանալուց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում, առավելագույնը՝ 5 օրվա ընթացքում:

Ժամկետների հետ կապված մյուս խնդիրը լրացուցիչ աշխատանք կատարելու հիմնավորմամբ պատասխանելու ժամկետների հետաձգման հնարավորության չարաշահումն է: Պատասխանելով ԻԱԿ այն հարցին, թե ինչ պարբերականությամբ են պետական կառույցները լրացուցիչ ժամանակ խնդրում հարցումներին պատասխանելու համար՝ հարցված լրագրողների գրեթե կեսը՝ 48%-ը նշել է «հաճախ» տարբերակը:

Պատկեր 9



Լրագրողները նշում են նաև, որ հաճախ 30-օրյա ժամկետը ոչ այնքան հավելյալ աշխատանք կատարելու համար են խնդրում, այլ ժամանակ շահելու: Նրանցից շատերն ասեցին, որ 30-օրյա ժամկետի չարաշահման լայնորեն տարածված պրակտիկայի մասին: Լինում են նաև դեպքեր, երբ 30-օրյա ժամկետի հնարավորությունից օգտվելով՝ տեղեկություն տնօրինողն ի սկզբանե լրացուցիչ ժամկետի կանոնն է կիրառում, իսկ 30-օրյա ժամկետը լրանալուց հետո տեղեկություն տնօրինողը (դա հատկապես հաճախ է պատահում ուժային կառույցների պարագայում) մերժում է տրամադրել տեղեկությունները գաղտնիք լինելու հիմնավորմամբ:

Լրագրողները նշում են.

«Քանի որ երկար հոդվածներ են պատրաստում, հաճախ մի քանի տարվա կտրվածքով են տվյալներ ուզում, գրեթե միշտ 30 օր են պահանջում պատասխանելու համար, ինչը գուցե նորմալ լինե, եթե լրոգված չպատասխանեին, կամ 30 օր անց միայն հայտնում են, որ նման տվյալներ չեն հավաքում, ինչից հետո դարձյալ հավելյալ զանգարահարելու, դարձյալ հարցում ուղարկելու կարիք է առաջանում, ու դարձյալ ստիպված ես լինում օրեր շարունակ սպասել»:


«Եթե մեծածավալ ինֆորմացիա ենք խնդրում տրամադրել, 30-օրյա ժամկետ են խնդրում, սակայն երբեմն 30 օր անց պատասխանում են, որ հարցերի պատասխանները գաղտնիք պարունակող տեղեկություններ են կամ իրենց գերատեսչությանը չեն վերաբերում: Ընդ որում, 30 օր ժամանակ են խնդրում նույնիսկ այնպիսի տեղեկությունների տրամադրման համար, որոնք, ենթադրվում է, ձեռքի տակ ունեն և լրացուցիչ աշխատանք չեն պահանջում»:

Հավելյալ աշխատանք կատարելու հիմնավորմամբ 30-օրյա ժամկետ կիրառելու պարագայում տեղեկություն տնօրինողը պարտավոր է 5-օրյա ժամկետում տեղեկացնել դիմողին նոր ժամկետի և դրա կիրառման պատճառների մասին: «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ լրացուցիչ աշխատանքի անհրաժեշտության և 30-օրյա առավելագույն ժամկետի մասին նշելուց բացի տեղեկություն տնօրինողը միջանկյալ պատասխանում պետք է նշի տեղեկության տրամադրման հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը: Լրացուցիչ աշխատանքը պահանջող տեղեկության տրամադրման ժամկետին հղում անելիս հիմնավորումը պետք է լինի սպառիչ և համոզիչ լրագրողի համար: Օրինակ այն, որ հարցմանը պատասխանող պաշտոնյան արձակուրդում է, չի կարող արդարացի հիմնավորում համարվել: Օրենքի խախտում առկա է նաև յուրաքանչյուր դեպքում, երբ հստակեցված չէ այն լրացուցիչ աշխատանքը, որը տեղեկության տրամադրումը հետաձգելու պատճառ է դարձել, կամ երբ նշված չէ տեղեկության տրամադրման կոնկրետ վերջնաժամկետը (որը չի կարող գերազանցել 30 օրը, սակայն կարող է 30 օրից պակաս լինել): Տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ լրացուցիչ աշխատանք կարող է դիտվել տեղեկության արդիականությունը ճշտելու, վերլուծություն կատարելու, տեղեկություն տնօրինողի ստորաբաժանումներից տեղեկությունը հավաքելու անհրաժեշտությունը և այլն:

Թեև հարցմանը մասնակցած որևէ լրագրող չի նշել լուր մերժումների խնդրի մասին, սակայն դեռևս հանդիպում է պրակտիկայում, երբ հարցումն այդպես էլ որևէ արձագանք չի ստանում: Թեև լուր մերժումների թիվը «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի կիրառման պրակտիկայի զարգացմանը զուգահեռ խիստ նվազել է, սակայն հաղորդակցության արդի ձևերի և մասնավորապես էլեկտրոնային հարցումների միասնական հարթակով ներկայացված հարցումներն անպատասխան մնալու

պայմաններում լուր մերժումները վկայում են կամ հարցումն անպատասխան թողնելու դիտավորության, կամ տեղեկություն ստանալու իրավունքի նկատմամբ անփութ վերաբերմունքի մասին: Լրագրողները նաև նշել են իրենց կարծիքը, թե որքանով է իրենց բավարարում օրենքով սահմանված 5-օրյա ժամկետը (տես՝ պատկեր 10): Ինչպես ցույց է տալիս ստորև պատկեր 10-ը՝ միայն 23%-ին է բավարարում այս ժամկետը: Մեծամասնությունը դժգոհ է՝ համարելով, որ այն չափազանց երկար է լրագրողի պարտականությունների կատարման համար:

Պատկեր 10



Մյուս կողմից, 5-օրյա ժամկետը խիստ կարճ է թվում պետական մարմինների աշխատակիցներին: ՏԱ պատասխանատուները նշում են, որ պատասխանների ուշացումների պատճառն է հենց սեղմ ժամկետը, որը որոշ դեպքերում չեն կարողանում ապահովել համակարգի գերծանրաբեռնվածության պայմաններում:

Ամփոփելով ժամկետների հետ կապված խնդիրները կարող ենք նշել, որ

- *հարցմամբ դիմող լրագրողները հաճախ պատշաճ չեն տեղեկացվում հարցման պատասխանի հետաձգման հստակ պատճառների մասին,*
- *հարցման պատասխանի տրամադրումը հետաձգելիս չի տրվում պատշաճ հիմնավորում հետաձգման պատճառների մասին,*
- *չի նշվում պատասխանի տրամադրման վերջնաժամկետը կամ միանգամից հղում է արվում օրենքով սահմանված առավելագույն հնարավոր ժամկետին,*
- *հարցմանը պատասխանելու ժամկետները որոշ դեպքերում խախտվում են՝ անգամ աշխատանքային օրերով հաշվարկելու դեպքում:*

Այսպիսով, տեղեկություն ստանալու հարցումների ժամկետների պահպանման խնդիրը համատարած է և լրջագույն խոչընդոտ է լրագրողների համար: Մյուս կողմից, դրական է այն, որ լրագրողներն այլևս չեն նշում անպատասխան մնացած հարցումների խնդրի մասին:

1.6 Տեղեկատվության ազատության պատասխանատու անձը

Լրագրողների տեղեկություն ստանալու գործընթացում առաջնային դերակատարում ունեն տեղեկություն տնօրինող մարմիններում նշանակված ՏԱ պատասխանատու անձինք, ովքեր կոչված են համակարգել և աջակցել հարցումներ ներկայացնելու և պատասխան տրամադրելու գործընթացում:

Օրենսդրական կարգավորումը

ՏԱ մասին օրենքի 12-րդ հոդվածի 5-ին մասի համաձայն «Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝ (...) 5) նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին»:

ՏԱ մասին օրենքի 13-րդ հոդվածն ամբողջությամբ վերաբերում է ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձին՝ սահմանելով.

«1. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձը կարող է լինել տեղեկատվություն տնօրինողի նշանակված պաշտոնատար անձը կամ տեղեկատվություն տնօրինողի ղեկավարը»:

Նույն հոդվածը սահմանում է նաև ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի լիազորությունների շրջանակը՝ նշելով, որ ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձը.


- ապահովում է տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը,
- տեղեկություն փնտրողին մատչելի ձևով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները և ձևերը,
- մշակում է ստացված հարցումների վիճակագրական և ամփոփ տվյալները:

ՏԱ մասին օրենքի վերոնշյալ դրույթներն առարկայացել են **N 1204-Ն որոշմամբ**, որը նաև սահմանել է, որ ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի պարտականությունները նշվում են վերջինիս՝ որպես տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձ նշանակելու մասին համապատասխան իրավական ակտում կամ պարտականությունները սահմանող այլ իրավական ակտում, ինչպես նաև, նշում է նրա հետ կապ հաստատելու տվյալները տեղեկություն տնօրինողի պաշտոնական կայքում հրապարակելու պահանջը (1204-Ն որոշման հավելված 1-ի 2-5 կետեր):

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքը շեշտադրել է ՏԱ պատասխանատուների դերը տեղեկություն փնտրողի հետ հարաբերություններում՝ ընդգծելով, որ ՏԱ պատասխանատուն է տեղեկություն փնտրողին մատչելի ձևով բացատրում տեղեկության տրամադրման կարգը, պայմանները և ձևերը:

Հարցված լրագրողների 74%-ը նշել է, որ տեղեկություն ստանալու գործընթացում առավել հաճախ օժանդակություն ստանում են տեղեկություն տնօրինողների մամուլի խոսնակներից և/կամ լրատվական ստորաբաժանման ղեկավարներից (*տես՝ պատկեր 1/*), որոնք տվյալ տեղեկություն տնօրինող կառույցում միաժամանակ նշանակված են որպես տեղեկատվության ազատության պատասխանատու անձ: Հարցվածների 9%-ը նշել է, որ որևէ մեկն իրենց չի օժանդակում տեղեկություն ստանալու գործընթացում:

Պատկեր 11



Հարկ նշել, որ ձևավորված պրակտիկայի համաձայն՝ պետական մարմիններում ՏԱ պատասխանատուի լիազորությունները հաճախ վերապահվում են մամուլի խոսնակ/հասարակայնության հետ կապերի վարչության/բաժնի պետերին: Լրագրողները նշում են, որ իրենք հակված են իրենց հարցումների պատասխաններն ակնկալել հենց խոսնակից՝ անկախ այն հանգամանքից, թե պաշտոնապես ով է նշանակված ՏԱ պատասխանատու անձ:


ՏԱ պատասխանատուները տեղեկություն փնտրողի (տվյալ դեպքում՝ լրագրողի) և տեղեկություն տնօրինողի միջև պատշաճ կապ ապահովող կարևոր օղակ է: Ըստ այդմ, չնայած պարբերաբար արդարացիորեն բարձրացվում է ՏԱ պատասխանատուների ինստիտուտի լավարկման անհրաժեշտությունը, ՏԱ պատասխանատուների համար պատշաճ ռեսուրսներ և լիազորություններ ապահովելու անհրաժեշտությունը, սակայն ՏԱ պատասխանատուների ինստիտուտը գործնականում դեռևս չի կարողանում լիարժեք իրականացնել իր գործառույթները:

Ընդգծենք, որ մամուլի խոսնակների/քարտուղարների և/կամ հանրային հաղորդակցման համար պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարների պարտականությունները որպես ՏԱ պատասխանատու մեծապես կախված են կառույցի փաստաթղթաշրջանառության ավանդույթներից և ներքին կարգավորումներից: Կառույցից կառույց պրակտիկան տարբեր է: Այսպես, կան կառույցներ, որտեղ ՏԱ պատասխանատուն թեպետ տեղեկացված է գերատեսչություն մուտք եղած հարցումների վերաբերյալ, սակայն պատասխանատվություն է կրում բացառապես ՁԼՄ-ներից և ՔՀԿ-ներից ստացված հարցումների համար: Որոշ գերատեսչություններում, պաշտոնապես հարցում դիտարկվող բոլոր փաստաթղթերի համար որպես առաջին կատարող հենց ՏԱ պատասխանատուն է նշանակվում: Կան կառույցներ, որտեղ հստակ առանձնացված են քաղաքացիների և լրագրողների հարցումները, և սա արված է նախ և առաջ լրագրողների հետ աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով: Այս բոլոր տարբերակներն էլ աշխատանքի ողջամիտ տարբերակ կարող են լինել, սակայն կարևոր է արձանագրել, որ այս ոլորտում ընդհանուր և միասնական մոտեցում չկա ձևավորված:

ԻԱԿ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պետական կառարման համակարգում մարմինների 95%-ն ունի նշանակված ՏԱ պատասխանատու անձ (տես՝ պատկեր 12):

ԻԱԿ-ը պարբերաբար հրապարկում է ՏԱ պատասխանատուների ցանկը իր պաշտոնական կայքում լրագրողներին աջակցելու նպատակով:⁹

Պատկեր 12



Հաշվի առնելով ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձին օրենքով վերապահված լիազորությունները՝ կարևոր է նաև ՏԱ ոլորտի վերաբերյալ ՏԱ պատասխանատուների գիտելիքի հարցը: Նախկինում տարբեր վերլուծություններով և ռազմավարական փաստաթղթերով ընդգծվել է ՏԱ պատասխանատուների ուսուցման՝ ՏԱ իրավունքի և ոլորտի օրենսդրության կիրառման պրակտիկայի վերաբերյալ բավարար գիտելիքի և հմտությունների կարևորությունը այս իրավունքի պատշաճ ապահովման համար: 2023 թվականի հունվարի 12-ի ՀՀ կողմից Եվրոպայի խորհրդի տեղեկատվության մատչելիության խմբին ուղղված AIG/Inf(2023)02 գեկույցում¹⁰ անդրադարձ է կատարվել նաև ՏԱ պատասխանատուների կրթությանն ու վերապատրաստումներին: Զեկույցում նշվում է, որ հանրային ծառայողների վերապատրաստումներն իրականացվում են դրվագային՝ տարբեր ծրագրերի կամ միջոցառումների շրջանակներում, ոլորտային հասարակական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ:

⁹ Պետական կառավարման համակարգում աշխատող [տեղեկատվության ազատության պատասխանատու անձանց ցանկը](#) հասանելի է ԻԱԿ պաշտոնական կայքում :

¹⁰ [Ազգային գեկույցը](#):


ԲԱԺԻՆ 2.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԵՐԺՈՒՄՆԵՐԸ

2.1 Մերժումների ընդհանուր հիմքերը


Հարցմանը մասնակցած լրագրողների 72.7%-ը նշել է, որ ամենադժվարը ռազմական և անվտանգության ոլորտների վերաբերյալ տեղեկություններ ստանալն է (*տես՝ պատկեր 13*): Հաջորդում են արտաքին գործերը և ներքին գործերը համապատասխանաբար 44.2 և 39 տոկոսներով:

Պատկեր 13



Ուստի հասկանալի է, որ լրագրողների մեծ մասը որպես տեղեկություն ստանալու մերժման ամենից հաճախ կիրառվող հիմք նշել է պետական գաղտնիքը (41.5 տոկոս, *տես՝ պատկեր 14*): Լրագրողների 11.5%-ը նշել է, որ առավել հաճախ տեղեկության տրամադրումը մերժում են առանց հիմնավորման:

Պատկեր 14



Օրենսդրական կարգավորումը

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է այն հիմքերը, որոնց առկայության դեպքում տեղեկության տրամադրումը կարող է մերժվել:

«1. Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

- 1) պարունակում է պետական, բանկային, առևտրային գաղտնիք կամ սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություն.
- 2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.
- 3) պարունակում է քրեական վարույթի՝ հրապարակման ոչ ենթակա տվյալներ.
- 4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).
- 5) խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:»

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «2. Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:» Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «3. Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝

- 1) վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաև տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին և դրանց հետևանքներին.
- 2) ներկայացնում է ՀՀ տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը.
- 3) չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և հոգևոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:»:

«ՏԱ մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «3. Գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաև դրա բողոքարկման կարգը:»:

Մտահոգիչ է, որ հարցված լրագրողների շուրջ 11.5%-ը հայտնել է առանց հիմնավորման տեղեկության տրամադրումը մերժելու մասին: Մի դեպքում լրագրողին մերժումը տրվում է միայն կրկնակի հարցումն ուղարկելուց հետո, մեկ այլ դեպքում դատական կարգով բողոքարկումից հետո: Ընդ որում, ոչ միշտ է, որ տրամադրված մերժումները պարունակում են օրենքով սահմանված ողջ տվյալները, այն է՝ տեղեկության տրամադրումը մերժելու գրության մեջ պետք է պարտադիր նշվի ինչպես օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կոնկրետ մերժման հիմքը, այնպես էլ այն օրենքի համապատասխան նորմը, որի համաձայն պահանջված տեղեկությունը համարվել է այս կամ այն գաղտնիք: Մերժումը նաև պարտադիր պետք է պարունակի մերժումը բողոքարկելու կարգը: Գործնականում մերժումների գերակշիռ մասն այս պայմանները չի բավարարում: Ինչպես նաև, որոշ դեպքերում խախտվում է մերժումը տրամադրելու օրենքով սահմանված 5-օրյա ժամկետը:

Լրագրողների դժգոհությունները տրամադրվող մերժումներից բազմաթիվ են.

«Պետական գերատեսչությունները հաճախ չարաշահում են պետական կամ ռազմական գաղտնիքի մասին օրենքները՝ լրագրողների հարցումներին բովանդակային կամ հիմնավոր պատասխան-տեղեկություն չտալու համար»:

«Շատ կարևոր և զգայուն թեմաներ են լինում, որոնց վերաբերյալ հասարակությունը սպասում է սպառիչ ու հստակ տեղեկությունների, բայց պետական կառույցները լռում են, չեն վստահում լրատվամիջոցներին, մյուս կողմից նույն թեմայով կեղծ լուրերն արագ տարածվում են սոցիալական հարթակներում՝ ապակողմնորոշելով մարդկանց: Հիմա ո՞ր դեպքում ավելի շատ վնաս հասցվեց մեր պետությանը: Մենք հասկանում ենք, որ այնպիսի տեղեկություն չենք տարածելու, որը մեր պետությունը կարող է վնասել»:

«Պատահել է, որ երկու տարբեր գերատեսչության ուղարկում ենք նույնաբովանդակ հարցում, մեկը գաղտնիքին հղում անելով՝ մերժում է, մյուսը մասամբ պատասխանում է: Սա նշանակում է որ կա օրենքի և դրա մեկնաբանության տարբեր ընկալում»:

«Եթե մեծածավալ ինֆորմացիա ենք խնդրում տրամադրել, 30-օրյա ժամկետ են խնդրում, սակայն երբեմն 30 օր անց պատասխանում են, որ հարցերի պատասխանները գաղտնիք պարունակող տեղեկություններ են կամ իրենց գերատեսչությանը չեն վերաբերում: Ընդ որում, 30 օր ժամանակ են խնդրում նույնիսկ այնպիսի տեղեկությունների տրամադրման համար, որոնք, ենթադրվում է, ձեռքի տակ ունեն և լրացուցիչ աշխատանք չեն պահանջում»:

«ՏԱ մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է պահանջված տեղեկության տրամադրումը մասամբ մերժելու կանոնը: Թեև հարցմանը մասնակցած լրագրողների պատասխաններում տեղեկության մասնակի մերժմանն անդրադարձ չկա, սակայն գործնականում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ հարցմամբ պահանջված տեղեկության մի մասն օրենքով սահմանված որևէ գաղտնիք լինելու պատճառով տեղեկություն տնօրինողը մերժում է հարցմամբ պահանջված բոլոր տեղեկությունների տրամադրումը: Նման մերժումը հակասում է «Տեղեկատվության ազատության մասին» օրենքին: Եթե հարցմամբ պահանջված տեղեկության մի մասը կամ պահանջված փաստաթղթում առկա որոշ տվյալներ (օրինակ, թիվ կամ որևէ անվանում և այլն) գաղտնի են, ապա տեղեկությունը (փաստաթուղթը) պետք է տրամադրվի մնացած՝ գաղտնիք չհամարվող մասով, մերժման ենթակա տեղեկություններն անընթեռնելի դարձնելու (ծածկելու, սևացնելու կամ ջնջելու) միջոցով և չխմբագրելով տեղեկության (փաստաթղթի) մնացած մասը: Նման ընթացակարգեր գործնականում չեն կիրառվում, անգամ մշակված չեն:

2.2 Մերժումը անձնական տվյալների պաշտպանության հիմքով

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքն ընդունվել է 2015 թվականին: Օրենքի ընդունումից հետո անձնական տվյալների պաշտպանության ոլորտի նոր կարգավորումները առիթ դարձան, որ տեղեկություն տնօրինողները բավական հաճախ մերժեն անձի վերաբերյալ տեղեկության տրամադրում ենթադրող լրագրողների հարցումները՝ պահանջված տեղեկություններն անձնական տվյալներ լինելու պատճառաբանությամբ:

Հարցմանը մասնակցած լրագրողների 11.5%-ը նշել է, որ պետական մարմիններն առավել հաճախ մերժում են հարցմամբ պահանջված տեղեկության տրամադրումն այն հիմնավորմամբ, որ տեղեկությունը պարունակում է անձնական տվյալներ (*տես՝ պատկեր 14*):

Անձնական տվյալների պաշտպանության հիմքով մերժումները երբեմն նաև զավեշտալի դրսևորումներ են ունենում: Ինչպես լրագրողներից մեկն է նշում՝ «Եղել է, որ հետախուզվողի վերաբերյալ հարցում ենք արել, ասել են անձնական տվյալներ են, պետք է հետախուզվողին հարցնենք»:

Մեկ այլ օրինակում լրագրողները փորձում են ճշտել՝ արդյոք նախկին ոստիկանապետը պաշտոնանկությունից առաջ ինքն իրեն պարզևատրե՞լ է զենքով, և եթե այո, ապա ինչ զենքով: Ստացել են մերժում, թե տեղեկությունն անձնական տվյալներ է պարունակում: «Մեր լրագրողական նյութերում ամեն ինչ կարելի է համարել անձնական տվյալ և չհրապարակել, եթե շարժվենք այս տրամաբանությամբ, քանի որ մեր նյութերը հենց մարդկանց մասին են»:

Անձնական տվյալների պաշտպանության մասին օրենքը չի արգելում այս կամ այն անձնական տվյալի մշակումը, այդ թվում՝ հարցման հիման վրա տրամադրումը կամ հրապարակումը, չի սահմանում նաև այս կամ այն անձնական տվյալի՝ գաղտնիք լինելու

Օրենսդրական կարգավորումը

ՀՀ սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք»:

Սահմանադրության 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ «1. յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք: 2. անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ»:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. անձնական տվյալներ մշակողը պարտավոր է հետևել և ապահովել, որ տվյալները մշակվեն օրենքի պահանջների պահպանմամբ»: նույն օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ անձնական տվյալներ մշակելն օրինական է, եթե ի թիվս այլնի ուղղակիորեն նախատեսված է օրենքով:

«ՏԱ մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «1. տեղեկատվություն տնօրինողը (...) մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝ (...) 2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը»:

կարգավիճակը: Անձնական տվյալը տվյալի տեսակի անվանումն է, այլ ոչ թե ռեժիմը: Իր հերթին, «ՏԱ մասին» օրենքն անձնական տվյալների մշակում, այն է՝ անձնական տվյալների հրապարակում կամ հարցման հիման վրա տրամադրում ուղղակի նախատեսող օրենք է:

Անձնական տվյալը տվյալի տեսակի անվանումն է: Այնինչ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի իմաստով տեղեկության տրամադրումը մերժելու հիմք է տեղեկության գաղտնիք լինելը: Արդյունքում, սխալ է տեղեկության տրամադրման մերժումը հիմնավորել տեղեկության տեսակով: Վերոնշյալը հաստատել է նաև անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինն իր թիվ N-006/01/19 վարչական գործով կայացրած որոշմամբ:¹¹ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը նշել է, որ անձնական տվյալն ինքնին գաղտնիք չէ, իսկ երրորդ անձանց համար դրա մատչելիությունը կամ հանրամատչելիությունը սահմանափակելու անհրաժեշտության դեպքում անձնական տվյալները կամ անձնական տվյալներ պարունակող փաստաթղթերը պետք է դասակարգվեն որպես որևէ գաղտնիք¹²:

Արդյունքում, բոլոր այն դեպքերում, երբ անձի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված կամ ձևավորված տվյալի մատչելիությունը կամ հանրամատչելիությունը սահմանափակված չէ օրենքով (*եթե այդ տվյալը դասակարգված չէ որպես որևէ գաղտնիք*), ապա այդ տվյալը պետք է հարցման հիման վրա տրամադրվի ճիշտ այնպես, ինչպես ցանկացած այլ տեղեկություն:

Տեղեկության՝ անձնական տվյալ պարունակելը տեղեկության տրամադրումը մերժելու պատշաճ հիմք չէ:


Բոլոր այն դեպքերում, երբ տեղեկություն տնօրինողները հարցմամբ պահանջված տեղեկության տրամադրումը մերժում են տեղեկության՝ անձնական տվյալ պարունակելու հիմքով, խախտում են Տեղեկատվության ազատության մասին օրենքը:

Լրագրողներին նաև խնդրել ենք ներկայացնել, թե իրենց կարծիքով որ մարմիններից է առավել դժվար ստանալ տեղեկություններ: Ինչպես երևում է ստորև պատկեր 15-ում՝ այդ կառույցների եռյակն են՝ Վարչապետի աշխատակազմը՝ 48%, պետական հիմնադրամները՝ 27%-ով, դատարանները և կառավարության ենթակա մարմինները՝ 26%-ով:

¹¹ Տես՝ ԻԱԿ-ն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի գործով Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի [որոշումը](#), 2019թ.:

¹² Անձնական տվյալների պաշտպանության [նուկեցույց](#), ԱՏՊ գործակալություն, 2019թ.:

Պատկեր 15



Ամփոփելով մեր ժողովների պրակտիկան կարող ենք փաստել, որ տեղեկություն ստանալու հարցումներն ամենից հաճախ մերժվում են պետական գաղտնիքի հիմքով: Տեղեկություն տնօրինողները ոչ միշտ են պահում մերժման՝ օրենքով սահմանված կարգը և ժամկետները: Որոշ դեպքերում մերժումները պատշաճ չեն հիմնավորվում կամ խախտվում են մերժումը տրամադրելու ժամկետները: Միաժամանակ, տեղեկություն տնօրինողներն անձնական տվյալը դեռևս սխալմամբ նույնացնում են անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտող տեղեկության (գաղտնիքի) հետ և հարցմամբ պահանջված տեղեկության՝ անձնական տվյալ լինելը կիրառում են որպես տեղեկության տրամադրումը մերժելու հիմք: Տեղեկության՝ անձնական տվյալ պարունակելը տեղեկության տրամադրումը մերժելու պատշաճ հիմք չէ:

ԲԱԺԻՆ 3.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ և ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆԸ

3.1 Տեղեկություն ստանալու իրավունքի խախտումների բողոքարկումները


Օրենսդրական կարգավորումը

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «4. Տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան»:

Են Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ «1. Պաշտոնական փաստաթղթի համար հարցումն ուղղակի կամ անուղղակի ձևով կամ ամբողջությամբ մերժելու դեպքում հարցում ներկայացնողի համար պետք է հասանելի լինեն դատարանում կամ օրենքով սահմանված այլ անկախ և անկողմնակալ մարմնում բողոքարկման ընթացակարգ: 2. Հարցում ներկայացնողը միշտ պետք է ունենա արագացված և ոչ ծախսատար բողոքարկման ընթացակարգի հնարավորություն:....»

Հարցմանը մասնակցած լրագրողների 67.5%-ը հայտնել է, որ տեղեկություն ստանալու իրավունքի խախտման դեպքում նախնտրում է նյութ գրել այդ մասին կամ փորձում են այլ աղբյուր գտնել՝ 62.3% (տես՝ պատկեր 16): Լրագրողները նշել են նաև, որ տեղեկություն ստանալու իրավունքի խախտման դեպքում այդ մասին գրառում են անում սոցիալական հարթակներում (29.9%), ինչպես նաև դիմում են տեղեկության տրամադրումը մերժած պաշտոնյայի վերադասին (50.6%) կամ Ինֆորմացիայի ազատության կենտրոն (15.6%) կամ Մարդու իրավունքների պաշտպանին (10.2%): Հատկանշական է, որ տեղեկություն ստանալու իրավունքի խախտման դեպքում առավել հաճախ նախընտրում են դիմել Ինֆորմացիայի ազատության կենտրոն՝ գործնական աջակցություն ստանալու ակնկալիքով, քան Մարդու իրավունքների պաշտպանին:


Պատկեր 16



Ինչպես սահմանում է ՏԱ մասին օրենքը՝ տեղեկություն տնօրինողից պատշաճ պատասխան չստանալու դեպքում իրավունքի խախտումը վերականգնելու հիմնական տարբերակը պետական լիազոր մարմնին կամ դատարան դիմելն է: Սակայն, հարցմանը

մասնակցած լրագրողների 91%-ը նշել է, որ տեղեկություն ստանալու իրավունքի խախտման դեպքում երբեք չի դիմել դատարան (*տես պատկեր 17*):

Պատկեր 17



Պրակտիկան և հարցումները վկայում են, որ դատական կարգով տեղեկություն ստանալու իրավունքի բողոքարկումը նպատակահարմար չէ լրատվամիջոցների և լրագրողների պարագայում, երբ մի կողմից բողոքարկումը ենթադրում է ծախսեր և ժամանակատար է, մյուս կողմից պահանջվող տեղեկությունը լրագրողական նպատակով օգտագործելու համար իր արդիականությունը սովորաբար անհամեմատ ավելի շուտ է կորցնում, քան դատական բողոքարկման ժամկետներն են:

«Մեկուկես տարի հետո տեղեկությունը տալը ժամանակավրեպ է և անհնարին ու անիմաստ է օգտագործելը, ժամանակի ու ռեսուրսի վատնում է նաև, ինչքան էլ եթե դատը շահես ու գումարդ հետ ստանաս: Չունենք հնարավորություն անընդհատ փաստաբան վարձել ու գնալ դատարան: Դատարանի տարբերակը կա, բայց որևէ լրատվամիջոցի համար դյուրին չէ այդ ճանապարհով գնալը»:

Բացի ծախսատար լինելուց դատարան դիմելը նաև խիստ ժամանակատար պրոցես է: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեղեկատվության տրամադրման մերժումը դատական կարգով վիճարկելու դեպքում դատական գործերի քննությունը միայն Վարչական դատարանում տևում է միջինը 1-4 տարի, իսկ բողոքարկման դեպքում երբեմն գերազանցում նաև այդ ժամանակահատվածը: Օրինակ, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ռազմավարական դատավարություններից մի քանիսի տևողությունը հասել է 5 տարի ժամկետը: Ակնհայտ է, որ նման իրավակիրառ պրակտիկան անհրաժեշտ օրենսդրական կարգավորումների բացակայության պայմաններում բովանդակագրելու է տեղեկատվության ազատության իրավունքը և անձին զրկում տեղեկատվության ազատության իրավունքի խախտման դեպքում արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի հնարավորությունից, քանի որ տեղեկատվության մատչելիության իրավունքի արդյունավետ իրականացումը պայմանավորված է առաջին հերթին տեղեկատվության տրամադրման սեղմ ժամկետներով: Միևնույն ժամանակ, ամիսներ կամ տարիներ անց դատական կարգով տեղեկատվության մատչելիության իրավունքի խախտումը վերացնելուց հետո արդեն վերացած է լինում նաև հայցված տեղեկատվության անհրաժեշտությունը, հետևաբար իրավունքի վերականգնում ըստ էության տեղի չի ունենում:

Տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի քննության համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն հատուկ՝ առավել սեղմ դատավարական ժամկետներ և ընթացակարգեր, ինչի հետևանքով նշված խմբի գործերի տևական քննությունը հաճախ զրկում է լրագրողին արդյունավետ իրավական պաշտպանության միջոցից:

Դատական պրակտիկայի հետ կապված մյուս խնդիրը տեղեկություն ստանալու իրավունքի խախտման համար սահմանված պատասխանատվության նորմերի կիրառման թույլ ձևավորված պրակտիկան է: Թեև պատասխանատվություն սահմանող իրավական նորմերն ընդունված են դեռևս 2003 թ.-ից, սակայն պրակտիկայում դրանք գրեթե չեն կիրառվում՝ եզակի բացառություններով: Անգամ երբ 2022թ.-ին ԻԱԿ-ի ներկայացրած հանրագրի շնորհիվ վարչական պատասխանատվության չափերը բարձրացան, կիրառման պրակտիկան, այնուամենայնիվ, չբարելավվեց: Ընդ որում, այն եզակի դեպքերում, երբ դատարանները վճռել են կիրառել վարչական պատասխանատվություն սահմանող նորմերը, դրանցում ներգրավված չեն եղել բարձրաստիճան պաշտոնյաներ (օրինակ, մի դեպքում պատասխանատվության է ենթարկվել մի գյուղապետ, մեկ այլ դեպքում՝ մասնավոր ընկերության ներկայացուցիչ):¹³ Մյուս կողմից, նկատենք, որ հայցվոր լրատվամիջոցները կամ հասարակական կազմակերպությունները ևս հակված չեն դատական բողոքարկման ընթացքում ներկայացնել վարչական պատասխանատվության նորմերը կիրառելու վերաբերյալ հայցապահանջներ:

Դատական կարգով բողոքարկումը կարող է առանձին դեպքերում ունենալ կանխարգելիչ գործառույթ: Լինում են դեպքեր, երբ դատարան դիմելու փաստն արդեն ունենում է դրական արդյունք, և հայցադիմումը ստացած պատասխանող կողմը շտապում է տրամադրել պահանջած տեղեկություններն իր դեմ կայացվող դատական ակտը կանխելու նպատակով: Նման օրինակ էր 2023թ.-ին Ինֆոքոմ լրատվամիջոցի դիմումի հիման վրա Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնած դատական գործն ընդդեմ իշխող «Քաղաքական պայմանագիր» կուսակցության՝ պարտավորեցնելու տրամադրել նախընտրական դրամահավաքի վերաբերյալ պահանջվող տեղեկությունները:¹⁴

Այսպիսով, դատական կարգով բողոքարկումը հաճախ անարդյունավետ է լրագրողների համար խիստ ծախսատար և ժամանակատար լինելու պատճառով: Տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի քննության համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն հատուկ՝ առավել սեղմ դատավարական ժամկետներ և ընթացակարգեր, ինչի հետևանքով այս գործերի տևական քննությունը հաճախ զրկում է լրագրողին արդյունավետ իրավական պաշտպանության միջոցից: Պատասխանատվություն սահմանող իրավական նորմերը թեև ընդունված են, սակայն պրակտիկայում դրանք գրեթե չեն կիրառվում դատարանների կողմից՝ եզակի բացառություններով: Մինևույն ժամանակ դատարան դիմելը կարող է որոշ դեպքերում ունենալ կանխարգելիչ գործառույթ կամ լինել խնդիրն արագ լուծելու ճանապարհ:

¹³ ԻԱԿ-ի նախաձեռնած ռազմավարական դատական գործերին կարող էք ծանոթանալ [այստեղ](#):

¹⁴ Այս դատական գործի [մանրամասները](#): ԻԱԿ մյուս բոլոր [դատական գործերը](#):

3.2 Տեղեկատվության ազատության լիազոր մարմինը

Օրենսդրական կարգավորումը


«Տեղեկատվության ազատության մասին» օրենքը սահմանում է, որ տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան:

Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ այն անձը, ում պաշտոնական տեղեկատվություն ստանալու հարցումը մերժվել է, մերժումը դատական կարգով կամ այլ անկախ և անաչառ պետական մարմնի բողոքարկելու իրավունք ունի: Ընդ որում, բողոքարկման գործընթացը պետք է լինի արագ և ոչ ծախսատար»:

SU լիազոր մարմինը տեղեկատվության ազատության պաշտպանությունը և տեղեկություն ստանալու իրավունքի կիրառման դրական պրակտիկայի զարգացման երաշխիք է: Ընդ որում, լիազոր մարմնի մասին նշելիս նկատի ունենք միջազգային լավագույն փորձին համապատասխան և անկախության երաշխիքներով ապահովված մարմին:

Թեև SU մասին օրենքը և Կոնվենցիան նախատեսում են տեղեկատվության ազատության լիազորված մարմնի հնարավորությունը, սակայն SU լիազոր մարմին Հայաստանում չի ձևավորվել: Նման պայմաններում Հայաստանում տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության այլընտրանքը մնում են դատարանները, որոնք չունեն լիազոր մարմնին բնորոշ այնպիսի գործիքներ, որ առանց երկարատև դատական գործերի և դատական պրակտիկայի ձևավորման կարողանան գործնականում մշտադիտարկել, վերլուծել և կարգավորել տեղեկատվության ազատության ոլորտում ծագած խնդիրները:¹⁵ Հարցմանը մասնակցած լրագրողների 66.2% նշել է, որ տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության անկախ մարմնի ստեղծումը դրական ազդեցություն կունենա տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության վրա (*տես՝ պատկեր 18*):

Պատկեր 18



¹⁵ Իրավունքի և ժողովրդավարության կենտրոնի գործադիր տնօրեն [Թորի Մենդելի հոդվածը](#) SU լիազոր մարմինների միջազգային փորձի և կարևորության մասին:

Միջազգային լավագույն փորձը ցույց է տալիս, որ ՏԱ լիազոր մարմինը պետք է լինի անկախ և անկողմնակալ, օրենքի հիման վրա ստեղծված կառույց, որի կայացրած որոշումները պետք է ունենան պարտադիր բնույթ: Լիազոր մարմինն առնվազն պետք է ունենա հետևյալ գործառնությունները.

- իրականացնել տեղեկատվության ազատության իրավունքի արտադատական անկախ և անկողմնակալ պաշտպանություն,
- ընդունել և քննել ՏԱ իրավունքի խախտման վերաբերյալ բողոքներ,
- իրականացնել ՏԱ պրակտիկայի մոնիտորինգ, վերլուծություն և լավագույն փորձի ներդրում,
- իրականացնել պաշտոնյաների կանոնավոր վերապատրաստումներ ՏԱ թեմայով:
- մշակել խորհրդատվականներ և փափուկ կարգավորումներ՝ ինչպես ընթացք տալ հարցումներին, ինչպես բավարարել տեղեկատվության պրակտիկ հրապարակման պահանջները, ինչպես ապահովել թափանցիկություն և հաշվետվողականություն և այլն
- ապահովել ՏԱ իրավունքի իրացման վերաբերյալ խորհրդատվություն ինչպես քաղաքացիների, լրագրողների, այնպես էլ տեղեկություն տնօրինող մարմինների համար,
- ապահովել ՏԱ ոլորտի օրենսդրության պարզաբանում,
- հավաքագրել և հրապարակել ՏԱ իրավունքի կիրառման պրակտիկայի մասին տեղեկություններ և երկրում ՏԱ իրավիճակը գնահատող տարեկան զեկույց, ինչպես նաև ներկայացնել ՏԱ հարցումների և որոշումների վիճակագրական միասնական տվյալներ:

ՏԱ լիազոր մարմնի հիմնադրման կարևորագույն պատճառներից է տեղեկատվության ազատության վերաբերյալ լավագույն փորձի մասին իրազեկելու, խորհրդատվություն տալու, տեղեկություն տնօրինողներին և քաղաքացիներին կրթելու անհրաժեշտությունն է: Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին կոնվենցիայի 9-րդ հոդվածը սահմանում է պետության պարտականությունը իրազեկել հասարակությանը պաշտոնական տեղեկատվություն ստանալու իրավունքի մասին, որն ի թիվս այլնի ներառում է նաև պաշտոնյաներին տեղեկություն տրամադրելու իրենց պարտականության մասին կրթելու և իրազեկելու գործառնություն:

ՏԱ լիազոր մարմինն ունենալու անհրաժեշտության մյուս հիմնական հիմնավորումը ՏԱ իրավունքի խախտումների անկախ վերանայումն է: Որպես հիմնական նպատակ՝ ՏԱ հանձնակատարը պետք է ընդունի և քննի ՏԱ իրավունքի խախտման վերաբերյալ բողոքները, ունենա նաև խախտումները բողոքարկելու իրավասություն՝ անկախ նրանից, թե ինչպիսի խախտման մասին է խոսքը՝ անօրինական մերժում, լուր մերժում, թե ՏԱ իրավունքի այլ խախտում: ՏԱ լիազոր մարմինը պետք է լինի անկախ և անկողմնակալ կառույց, որի անկախության ապահովման համար պետք է սահմանվեն անկախության երաշխիքներ (նշանակման/ընտրության մեխանիզմներ, ֆինանսական անկախություն): ՏԱ լիազոր մարմնի դերը պետք է լինի նաև միասնական պրակտիկայի ձևավորումը խթանող մեկնաբանություններ և փափուկ կարգավորումներ մշակելը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ Եվրամիության կազմում գտնվող պետությունների մեծ մասն ունի ՏԱ հանձնակատարի կամ դրան համարժեք պաշտոններ:

Առկա է երկու հիմնական մոդել՝

- ա) երկրներից մի քանիսում, օրինակ, Գերմանիայում, Սլովենիայում, Մեծ Բրիտանիայում, Էստոնիայում մեծ հաջողությամբ գործում է Անձնական տվյալների պաշտպանության և Տեղեկատվության ազատության միասնական հանձնակատարը, որը քննում է և՛ անձնական տվյալներ պաշտպանության, և՛ ՏԱ վերաբերյալ բողոքները:
- բ) Որոշ երկրներում տեղեկատվության ազատության բողոքներն ուսումնասիրելու նպատակով հատուկ ստեղծված մասնագիտացած մարմիններ՝ ՏԱ հանձնակատարի գրասենյակ/հանձնաժողով (օրինակ, Ավստրալիայում, Կանադայում, Ֆրանսիայում, Շվեդիայում և այլն):

Դրա հետ միասին մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը չի կարող համարվել տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության տեսանկյունից արդյունավետ արտադատական մարմին՝ հաշվի առնելով իմպերատիվ լիազորությունների բացակայության խնդիրը: Պատահական չէ, որ Հայաստանը տեղեկատվության ազատության միջազգային վարկանիշավորման համակարգում 0 միավոր է տրվել հենց այդ ցուցիչով (ցուցիչ 42-անկախ վերահսկող մարմնի որոշումները պարտադիր իրավաբանական ուժ ունեն):¹⁶

Այսպիսով, թեև ԵԽ Կոնվենցիան և ՏԱ օրենսդրությունը նախատեսում են ՏԱ լիազոր մարմին, սակայն Հայաստանում դեռևս այն ձևավորված չէ: Մաժամանակ, միջազգային փորձը վկայում է, որ տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության անկախ արտադատական վերանայումը լավագույն երաշխիքն է այս իրավունքի լիարժեք պաշտպանության համար:

Միջազգային պրակտիկայում հանդիպում է անկախ վերանայման երկու հիմնական մոդել՝ ՏԱ և Անձնական տվյալների պաշտպանության միասնական մոդելը, որն իրականացնում է երկու ոլորտների գործառնությունները միաժամանակ, իսկ երկրորդը՝ ոլորտային անկախ մոդելը՝ օժտված միայն ՏԱ գործառնություններով: Մեկ այլ՝ երրորդ տարբերակում այս հարցերը դրված են Մարդու իրավունքների պաշտպանի վրա, սակայն այս մոդելը համարվում է անարդյունավետ մի շարք պատճառներով, բայց նախևառաջ այն հիմնավորմամբ որ Պաշտպանի որոշումները չունեն պարտադիր բնույթ և տեղեկություն տնօրինող պետական մարմնի կողմից չկատարվելու դեպքում իրավունքի պաշտպանության միակ միջոցը մնում են դատարանները, սակայն դատական քննությունը ծախսատար և ժամանակատար է:

¹⁶ [Global Right to Information rating, Armenia:](#)

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆՆԵՐ

Արձանագրված բազմաթիվ խնդիրների լուծման նպատակով մշակվել են մի շարք առաջարկներ և խորհրդատվականներ, որոնց իրականացումը կարող է ապահովել առաջիկա տարիներին տեղեկատվության ազատության ոլորտի արդյունավետ և կայուն զարգացումը՝ միաժամանակ երաշխավորելով Հայաստանի առաջանցիկ փորձն այս ոլորտում:

Առաջարկներ ուղղված տեղեկություն տնօրինողներին

Հարցումների բովանդակությունը

- Տեղեկություն տնօրինողները պետք է ապահովեն, որ տեղեկություն ստանալու յուրաքանչյուր հարցման տրվի լիարժեք և սպառիչ պատասխան: Հարցման մեջ ներառված յուրաքանչյուր հարցի պատասխան պետք է լինի ամբողջական և հավաստի:
- Հարցումների հետ առնչվող աշխատողները պետք է տեղյակ լինեն մեկից ավելի հարցեր պարունակող հարցումների բոլոր հարցերի պատասխանները հերթական համարակալմամբ տրամադրելու՝ տեղեկություն տնօրինողի պարտականության մասին (վերապատրաստումների և իրազեկման միջոցով):
- Անհրաժեշտ է իսպառ բացառել անպատասխան/անարձագանք մնացած հարցումները:
- Դիմողը չպետք է հիմնավորի իր հարցումը: Միաժամանակ, տեղեկություն տնօրինողները անհրաժեշտության դեպքում պետք է օժանդակեն դիմողներին՝ հարցումը ձևակերպելու, հարցումն ուղարկելու եղանակների, հարցման պատասխանը կոմունիկացնելու, բողոքարկելու և այլ հարցերում:

Պատասխանելու ժամկետները

- Անհրաժեշտ է միջոցներ կիրառել, որ հարցումները պատասխանվեն անհապաղ կամ առավելագույնը դրանք ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Վերջնաժամկետի պահպանման նկատմամբ հսկողությունը պետք է վերապահվի ՏԱ պատասխանատուին:
- Անհրաժեշտ է ապահովել, որ բոլոր այն դեպքերում, երբ հարցմամբ պահանջված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, պետք է առավելագույնը 5-օրյա ժամկետում հարցմամբ դիմողին ներկայացվի միջանկյալ գրություն՝ նշելով տեղեկության տրամադրման հետաձգման կոնկրետ պատճառները և տեղեկությունը տրամադրելու՝ 30 օրը չգերազանցող կոնկրետ վերջնաժամկետը:

Խտրականության բացառումը

- Տեղեկություն տրամադրելու գործընթացում տարբեր դիմողների նկատմամբ պետք է ցուցաբերվի միասնական վերաբերմունք՝ բացառելով խտրականությունը:
- Անհրաժեշտ է ապահովել, որ յուրաքանչյուր հարցում քննարկվի բացառապես օրենսդրությամբ սահմանված կարգով՝ անկախ նրանից, թե ով է հարցմամբ դիմողը:

Հարցումների մերժումները

- Պետք է ապահովել, որ տեղեկություն տրամադրելու բոլոր մերժումները պարունակի հետևյալ երեք տեղեկությունները՝

- մերժման հիմքը (հղում «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան կետին)
- այն օրենքի այն նորմը, որի համաձայն պահանջված տեղեկությունը համարվում է այս կամ այն գաղտնիք
- մերժումը բողոքարկելու կարգը:
- Մերժումները պետք է տրամադրվեն բացառապես 5-օրյա ժամկետում:
- Հարցումների հետ առնչվող աշխատողներին տեղեկացնել այն մասին, որ տեղեկության անձնական տվյալ լինելը չպետք է տեղեկության տրամադրումը մերժելու պատրվակ լինի: Ինչպես ցանկացած տեղեկության, այնպես էլ անձնական տվյալներ պարունակող տեղեկության տրամադրումը կարող է մերժվել բացառապես «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում՝ համապատասխան իրավական հիմնավորմամբ և օրենքով սահմանված կարգով:

Փաստաթղթաշրջանառություն, գործավարություն և վիճակագրություն

- Կարևոր է, որ տեղեկություն տնօրինողները փաստաթղթաշրջանառության ներքին համակարգերում (օրինակ, Մալքերի համակարգում) հարցումները տարանջատեն այլ դիմումներից և դրանց պատասխանելու համար սահմանեն 5-օրյա վերջնաժամկետ: Վերջնաժամկետի պահպանման նկատմամբ հսկողությունը պետք է վերապահվի տվյալ կառույցի ՏԱ պատասխանատուին:
- Անհրաժեշտ է, որ տեղեկություն տնօրինող մարմնում տեղեկություն ստանալու հարցումների գործավարությունն իրականացվի գործավարության մյուս ձևերից առանձին:
- Անհրաժեշտ է իրականացնել տեղեկություն տնօրինողի մոտ ստացված կամ ձևավորված տվյալների (տեղեկությունների) ցուցակագրում ըստ գաղտնիք համարվող և չհամարվող տեղեկությունների: Գաղտնիք համարվող տեղեկություններից յուրաքանչյուրի համար ունենալ տեղեկությունը որպես նման գաղտնիք դասակարգելու իրավական հիմքը:
- Անհրաժեշտ է ապահովել, որ տարին մեկ անգամ պաշտոնական կայքում տեղեկություն տնօրինողները հրապարակեն ստացված հարցումների վերաբերյալ ամփոփ վիճակագրական տվյալները՝ համաձայն ՏԱ մասին օրենքի կարգավորումների: Վիճակագրական տվյալների միասնական ձևավորման նպատակով առաջարկում ենք օգտագործել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի մշակած օրինակելի ձևանմուշը:
- Անհրաժեշտ է, որ տեղեկություն տնօրինող մարմինները գնահատեն իրենց կողմից ՏԱ օրենսդրության պահանջների կատարման պատշաճությունը, ձեռնամուխ լինեն արձանագրված խնդիրների վերացմանը՝ ձգտելով տեղեկատվության ազատության ապահովման պրակտիկան համապատասխանեցնել օրենսդրությանը՝ ներառյալ միջազգային լավագույն փորձին:
- Առաջարկում ենք ներդնել տեղեկատվության ազատության ինքնագնահատման համակարգ, որը թույլ կտա տեղեկություն տնօրինողներին իրականացնել իրենց պրակտիկայի պարբերական վերանայում, խնդիրների վեր հանում և կանխարգելում, ինչպես նաև պրակտիկայի բարելավում:
- Անհրաժեշտ է տեղեկատվության ազատության պատասխանատուների կանոնավոր վերապատրաստումներ իրականացնել Պաշտոնական փաստաթղթերի

մատչելիության մասին կոնվենցիայի դրույթներին ծանոթացնելու և ՏԱ ոլորտում գործնական կիրառման հմտություններ և գիտելիք փոխանցելու նպատակով:

Առաջարկներ ուղղված տեղեկություն փնտրողներին՝ քաղաքացիական հասարակությանը և լրագրողներին

- Քաղաքացիական հասարակությունը և լրատվամիջոցները պետք է կանոնավոր վերապատրաստումներ իրականացնեն լրագրողների համար՝ ապահովելու տեղեկություն ստանալու իրավունքի իրացման հարցում որակյալ հմտություններ:
- Տեղեկատվության ազատության իրացման պատշաճ պրակտիկա ապահովելու համար անհրաժեշտ է հարցման հիմնավորում պահանջող տեղեկություն տնօրինողներին ի պատասխան ոչ թե ներկայացնել հարցման հիմնավորում, այլ պարզաբանել, որ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի և Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին կոնվենցիայի համաձայն՝ հարցմամբ դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը: Մեկից ավելի հարցեր պարունակող հարցումներում անհրաժեշտ է համարակալել հարցերը, ապա նշել 1204-Ն որոշման մասին, որի համաձայն տեղեկություն տնօրինողը պարտավոր է հարցմամբ առաջադրված հարցերի պատասխանները տրամադրել հերթական համարակալմամբ:
- Լրագրողների մեծ մասը տեղյակ չէ Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին Կոնվենցիայի դրույթներից, և այս առումով վերապատրաստումների և խորհրդատվության աջակցությունը խիստ պահանջված է:
- Քաղաքացիական հասարակությունը և լրատվամիջոցները կարող են ակտիվ հանրայնացնել և քննադատել այն կառույցներին կամ պաշտոնյաներին, որոնք կանոնավոր խախտում են լրագրողների տեղեկություն ստանալու իրավունքը (naming & shaming):
- Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են նախաձեռնել հնարավորինս շատ աջակցություն լրագրողներին՝ տեղեկություն ստանալու իրավունքի խախտումների ռազմավարական բողոքարկումներ (այդ թվում՝ դատական կարգով) իրականացնելու համար:
- Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են իրականացնել տեղեկատվության ազատության դատական պրակտիկայի պարբերական մշտադիտարկում՝ վեր հանելու դատական որոշումների բովանդակային խնդիրները, պարզելու այս գործերի քննության ժամկետների վիճակագրությունը և բացահայտելու պատասխանատվություն սահմանող նորմերի սահմանափակ կիրառման պատճառները:
- Քաղաքացիական հասարակությունը կարող է նախաձեռնել տեղեկություն ստանալու խախտված իրավունքը դատական կարգով բողոքարկելու ռազմավարական դատավական գործեր՝ հանրային կարևորության հարցերով: Միևնույն ժամանակ, հայցվոր լրատվամիջոցները կամ հասարակական կազմակերպությունները վարչական մարմնի անգործությունը ճանաչելու և տեղեկության տրամադրման պարտավորեցման հայցապահանջներ ներկայացնելու հետ միասին պետք է ակտիվորեն ներկայացնեն նաև վարչական պատասխանատվության նորմեր կիրառելու վերաբերյալ հայցապահանջներ:
- Քաղհասարակությունը և լրատվամիջոցները պետք է ակտիվ պահեն անկախ լիազոր մարմնի ձևավորման օրակարգը և սերտորեն աշխատեն կառավարության հետ լիազոր մարմնի ստեղծման իրավական հենքի վերջնական ձևավորման և ինստիտուցիոնալ կայացման նպատակով:

Առաջարկություններ ուղղված Կառավարությանը և Ազգային ժողովին

Օրենսդրական և կարգավորող բարելավումներ

- Անհրաժեշտ է, որ ՀՀ կառավարությունը «Հանրային տեղեկատվության մասին» օրենքի ընդունման համատեքստում ամբողջությամբ լուծի տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև տեղեկություն տնօրինողների կողմից իրականացվող տեղեկատվության՝ ամբողջական (լրիվ) և հավաստի լինելու հարցերը:
- Անհրաժեշտ է, որ ՀՀ կառավարությունն ապահովի տեղեկություն ստանալու հարցումների քննարկման միևնույն և միասնական չափանիշներ՝ բացառելու տեղեկությունների տրամադրման տարբերակված և խտրական մոտեցումը:
- Միասնական պրակտիկայի ձևավորման մեխանիզմները պետք է հստակ սահմանվեն Հանրային հաղորդակցության ընթացիկ բարեփոխման շրջանակում՝ ապահովելով ՏԱ պատասխանատուի գործառույթների սպառիչ շրջանակը, պատասխանատուի կարգավիճակը և ռեսուրսները:
- ՀՀ կառավարությունը պետք է հետևողական լինի պետական մարմինների կողմից ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալների հրապարակման հարցում, այդ նպատակով որպես խորհրդատվություն կազմի միասնական ձևաչափ՝ ապահովելով, որ վիճակագրության շրջանակում յուրաքանչյուր պետական մարմին հրապարակի իր կողմից տեղեկություն ստանալու հարցումների մերժման հիմքերը: Այս նպատակով կարող է օգտագործվել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի մշակած [ձևանմուշը](#):
- Ազգային ժողովը և Կառավարությանը պետք է նախաձեռնեն օրենսդրական փոփոխություններ՝ ՀՀ վարչական ու քաղաքացիական դատավարության օրենսգրքերում ամրագրելու տեղեկատվության ազատության իրավունքի՝ պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթը որպես առանձին վարույթի տեսակ՝ սահմանելով հայցադիմումի քննության 30-օրյա ժամկետ, ինչը զգալիորեն կնպաստի տեղեկատվության ազատության և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքների հետագա խախտումների կանխարգելմանը:
- Նախաձեռնած օրենսդրական փոփոխությունների շրջանակում դիտարկել նաև տեղեկություն ստանալու հարցման վավերապայմանների շարքից ստորագրության և քաղաքացիության պահանջների վերացման հարցը, բացառությամբ այն դեպքերի, երբ անձն ինքն իր մասին տեղեկություն ստանալու հարցում է անում՝ այսպիսով համապատասխանեցնելով ազգային օրենսդրությունը կոնվենցիոն պահանջներին: Այս նպատակով կարող է օգտագործվել 2019 թվականին ԻԱԿ-ի և ՀՀ Արդարադատության նախարարության համատեղ մշակած [օրենքի նախագիծը](#):

E-request միասնական հարթակի կիրառելիության խթանում լրագրողների շրջանում

- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել իրազեկող, պրակտիկ-ձանաչողական միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան լրագրողներին հասկանալ հարթակի առավելություններն իրենց աշխատանքի կազմակերպման տեսանկյունից:
- Մշակել մատչելի առցանց ուղեցույց հատուկ մեդիա համայնքի համար: Ուղեցույցը պետք է ներկայացնի հարթակի միջոցով լրագրողների հետ պետական կառույցների փոխգործակցության կարևորությունն ու խաղի կանոններ սահմանի երկու կողմերի համար: Պրակտիկան ցույց է տալիս, որ պետական կառույցների աշխատակիցները նույնպես ունեն ամբողջական և հստակ տեղեկության կարիք:

- Առնվազն որոշակի ժամանակափուլով ստեղծել միջավայր/մեխանիզմներ լրագրողների և լրատվամիջոցների կողմից e-request-ի փորձարկման և իրենց փորձառության հիման վրա առաջարկներ ներկայացնելու համար:
- Պարբերաբար մշակել և լրատվամիջոցներին/լրագրողներին տրամադրել հարթակի վերաբերյալ խորհրդատվություն և աջակցություն՝ հարցումներ ուղարկելու պրակտիկան էլեկտրոնային փոստերից տեղափոխելով e-request հարթակ: Միաժամանակ լրագրողների հետ աշխատող պետական պաշտոնյաների միջոցով լրագրողներին փոխանցել հարցումները հարթակի միջոցով ուղարկելու նախապատվելիության մասին հստակ ուղերձ:
- Հարթակը տեխնիկապես կատարելագործել՝ դրանում ներառելով SU ոլորտի հնարավոր բոլոր գործիքները, օրինակ, հարթակը կարող է ներառել տեղեկություն տնօրինողների կողմից ինքնագնահատման իրականացման էլեկտրոնային գործիքը,
- նվազագույնի հասցնել կամ բացառել հարթակի տարբեր գործիքների կիրառման ընթացքում մարդկային գործոնի և հայեցողական որոշումների կայացման հնարավորությունները,
- ապահովել հարթակի բոլոր բաժինների պատշաճ աշխատանքը, ներառյալ՝ դրա գործիքները պարբերաբար թարմացնելու և կատարելագործելու միջոցով,
- ապահովել հարթակում առկա խնդիրների վերաբերյալ ահազանգերի և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների պարտադիր քննարկում,¹⁷
- հնարավորինս հաշվի առնել տեղեկության հավանական ստացողների հատուկ կարիքները էլեկտրոնային հարցումների միասնական հարթակում:

SU լիազոր մարմինը

- Անհրաժեշտ է, որ ՀՀ կառավարությունը սկսի տեղեկատվության ազատության լիազոր մարմնի (հանձնակատարի) սահմանադրական ինստիտուտի ստեղծման գործընթացը՝ ապահովելով, որ այդ մարմինն ի թիվս այլնի առնվազն.
 - ունենա անկախության իրական երաշխիքներ (նշանակման/ընտրության մեխանիզմներ, ֆինանսական անկախություն),
 - իրականացնի SU պաշտպանություն և այս ոլորտում վեճերի անկախ արտադատական վերանայում,
 - իրականացնի SU պրակտիկայի վերլուծություն և մշտադիտարկում,
 - ապահովի SU իրավունքի իրացման վերաբերյալ խորհրդատվություն և իրազեկում,
 - իրականացնի պաշտոնյաների կանոնավոր վերապատրաստումներ SU թեմայով: Միաժամանակ, կարող է նաև խորհրդատվականներ և փափուկ կարգավորումներ մշակել, թե ինչպես ընթացք տալ հարցումներին, ինչպես բավարարել տեղեկատվության պրոակտիվ հրապարակման պահանջները,
 - իրականացնի ոլորտի մշտադիտարկում, այդ թվում՝ վերահսկողություն տեղեկատվություն տնօրինող սուբյեկտների կողմից օրենքով պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվությունը ժամանակին և ամբողջական հրապարակելու պարտականության կատարման նկատմամբ,
 - ապահովի SU ոլորտի օրենսդրության պարզաբանում,

¹⁷Տես, ԻԱԿ-ի Պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակներից մատուցվող ծառայությունների և www.e-request.ni և www.e-draft.am հարթակների կիրառման մոնիթորինգի արդյունքներում ներկայացված [առաջարկությունները](#), 2019:

- հավաքագրի և հրապարակի ՏՄ իրավունքի կիրառման պրակտիկայի մասին տեղեկություններ և երկրում ՏՄ իրավիճակը գնահատող տարեկան զեկույց, ինչպես նաև ներկայացնի ՏՄ հարցումների և որոշումների վիճակագրական միասնական տվյալները,
- մշակի միասնական պրակտիկայի ձևավորումը խթանող մեկնաբանություններ և փափուկ կարգավորումներ:
- Առանցքային է, որ ՀՀ կառավարությունը տեղեկատվության ազատության լիազոր մարմնի (հանձնակատարի) սահմանադրական ինստիտուտի ստեղծման բոլոր նախաձեռնություններն ի սկզբանե իրականացնի բացառապես քաղաքացիական հասարակության ներգրավմամբ:

Հատությունների և գիտելիքի զարգացում

- Գտնում ենք, որ պետք է հատուկ ուշադրություն դարձվի տեղեկություն տնօրինողների իրավասու պաշտոնյաների ՏՄ վերաբերյալ գիտելիքի մակարդակի բարձրացմանը, կրթությանը, տեղեկատվության ազատության և անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ ուսուցումների և վերապատրաստումների իրականացմանը: Կառավարությունը պետք է հնարավոր բոլոր միջոցները ձեռնարկի ՏՄ ոլորտում տեղեկություն տնօրինողների մասնագիտական գիտելիքի և պրակտիկ հմտությունների կատարելագործման ուղղությամբ՝ ապահովելով դասընթացների շարունակականությունն ու մեթոդաբանության միասնականությունը:

Առաջարկություններ ուղղված Մարդու իրավունքների պաշտպանին

- Մարդու իրավունքների պաշտպանին առաջարկում ենք տեղեկատվության ազատությունը և դրա կիրառման պրակտիկան դարձնել ամենամյա առանձին զեկույցի առարկա: Թեև 2023թ. տարեկան [զեկույցում](#) Պաշտպանն անդրադարձել է ոլորտի մի շարք խնդիրների, սակայն առաջարկում ենք հանդես գալ նաև համապարփակ զեկույցով նվիրված տեղեկատվության ազատությանը՝ համալիր անդրադառնալով տեղեկություն ստանալու իրավունքի իրացման գործընթացում առկա բոլոր խնդիրներին, ներառյալ՝ տեղեկությունների տրամադրումը մերժելու հիմքերին և դրանց պատշաճությանը:

Առաջարկություններ ուղղված Բարձրագույն դատական խորհրդին, դատական դեպարտամենտին և դատաբաններին

- Ցանկալի է, որ ստեղծվի հատուկ արտահայտվելու ազատության և տեղեկատվության ազատության հարցերում մասնագիտացած դատավորների խումբ, որոնք լիարժեք կտիրապետեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ոլորտային պրակտիկային, ՀՀ ոլորտային նախադեպային իրավունքին, ինչպես նաև քաջաձանոթ կլինեն մամուլի և լրագրողների աշխատանքի առանձնահատկություններին:
- Անհրաժեշտ է իրականացնել դատավորների (հիմնականում վարչական դատարանի)՝ տեղեկատվության ազատության ոլորտի վերաբերյալ կանոնավոր ուսուցումներ և վերապատրաստումներ:
- Ինչպես նաև կարևոր է, որ Դատական դեպարտամենտը մշտադիտարկի և առանձին վիճակագրություն հրապարակի տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական գործերի քննության ժամկետների և դատական ակտերի վերաբերյալ:
- Անհրաժեշտ է, որ դատավորները լիարժեք կիրառեն տեղեկություն ստանալու իրավունքի խախտման համար սահմանված վարչական պատասխանատվության նորմերը՝ առանց խտրականության:



ԻՆՖՈՐՄԱՅԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ

ՀՀ, Երևան, Փ. Բուզանդի 1/4, 4-րդ հարկ

Հեռ. 091435136

Էլ. փոստ՝ foi@foi.am

www.foi.am, www.givemeinfo.am